№ 4-5 (145-6) XIV ՏԱՐԻ ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԿՐԻՈՂ ՍԱՍՈՒՆ

ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԹՒՒՐՔ ԶՕՐՔԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

ՀԱՅԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ. ԹՐՔԱԿԱՆ ԲՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հինգ հազար մարդկային դիակներ, տասնեւութ գիւղ մեերուած, հազար տուն կրակի ճարակ, — այդ էր բրոնպետութեան հրաշակերտած պատկերը սրանից տասն տարի առաջ, երբ Ծովասարի շուրջը առաջին անգամ ծածանեց ազատութեան դրօշակը, ամենամեծ սպառնալիքը սուլթանական ապահովութեան:

Եւ այդ պատկերի դիմաց՝ Եըլդըզ-Քիօսքի մենաւորը, դիւական ժպիտը երեսին, ոսկրացած ձեռքերը չփեց և այս խօսքերը մրմնջաց՝ „Լաւ խրատ եղաւ. էլ չեն երազի և երբէք չեն համարձակի":

Տասն տարի անցաւ: Փըւփըռ-Քարի ստորոտներին նորից ծլեց ազատութեան շիթը: Սնուած զոհերի արեան վտակներով ու ցօղուած կենդանի մնացորդների արտասուքի ծլծլան կաթիլներով, նա էլի մի անգամ տուեց իր պտուղները, — քաջերի այն խումբը, որ ազատութեան դաղերը շրթունքներին, կուրծք տուեց թշնամուն:

Ու այս անգամ աւելի համարձակ, քան թէ առաջ, աւելի վճռական ու կազմակերպուած: Մի օր լեռների լանջին թառած, միւս օրը դաշտի գիւղերի „հաւարին" հասած, մի այլ անգամ քիւրդ հրոսակների դէմ ծառացած՝ յեղափոխական քաջարի մարտիկները, թէև փոքրաթիւ, թշնամու ահագին բանակի համեմատութեամբ, անվհերութեան չքնաղ ապացոյցներ տուեցին: Եւ կռուի ընթացքում՝ հայոց պատրիարքարանի միջոցով սկսած միամիտ բանակցութիւնները, Բիթլիզի վալիի արած խաբեբայական յայտարարութիւնները, սուլթանի անունից եկած սին առաջարկները,—կառավարչական բարեմտութեան նշաններ չէին, այլ բաց՝ այայտ փաստեր այն խորունկ երկիւղի, որ սասունեան խմբերը ներշնչում են մեծաթիւ հակառակորդին...

Ստոր, զաղջուկ հակառակորդ: Նա մնաց նոյնը, ինչ տասն տարի առաջ էր.—երկչոտ, միշտ փախուստի տրամադիր բաց դաշտում, ճակատ առ ճակատ հայ զինուորի դիմաց, և արիւնարբու, անխիղճ ու վայրագ անմեղների հանդէպ՝ անօգնական գիւղերում, կանանց և երեխաների դիմաց: Հրդեհ, կոտորած, խողխողանք, բռնաբարութիւն—ահա նրա միակ պատասխանը հայ ռազմիկներին, նրան արժանի միակ վրէժը՝ հայ յեղափոխութեան...

Այդ „վրէժը" անզօր եղաւ չորացնելու այն ծիլը, որ բուսաւ Տալորիկի ազատաշունչ օդում՝ և արդէն իր տասնամեակը բոլորեց: Նա աւելի ևս անզօր է այսօր, երբ ստրուկ հայերին ժառանգել են կռուող զաւակներ, կրակի և փոթորկի միջից անցած, տրամադիր մինչև վերջ շարունակելու ազատագրական աշխատանքը:

Նախորդների արիւնը յաջորդների ոգևորութեան աղբիւրն է... Ազատութեան արշաւանքը դարձեալ մի անգամ անցնում է տանջուած գիւղերի մօտով, այն ձորերի վրայից, ուր այնքա՜ն հերոսների դիակներն են ընկած, միշտ գլուխը բարձր, միշտ յոյսն ու հաւատը ճակատին, միշտ աչքերը նպատակին յառած:

Թող չխրախուսայ թշնամին: 94-ի Սասունը իր ներկայ տասնամեակին դիմաւորեց ոչ իբրև ստրուկ, որպէս թշնամին էր կարծում, և կամ ուժասպառ, ինչպէս Եւրոպան էր ենթադրում, այլ իբրև կռուող, յեղափոխական կրակը կրծքում և զէնքը ձեռքին:

Ապրիլ-մայիսեան նորագոյն դէպքերը, որոնց նկարագրութիւն բերում ենք ներքև, թելադրում են աւելի պինդ բռնել կռուի զէնքը և շարունակել նախագծած ուղին, վստահ, հաւատքով, խորապէս համոզուած, որ „սարերի յետևը չէ" այն գեղեցիկ օրը, երբ տանջուած հայութիւնը կարող կը լինի տօնել տարեդարձը ոչ թէ ստրկութեան և արիւնի, այլ տարեդարձ ազատութեան, զինադադարի, սկիզբն ազատ Սասունի, ազատ Հայաստանի, ազատ Փոքր-Ասիայի...

Յարգա՜նք նորոգ նահատակներին:

Ողջո՜յն նրանց յաջորդներին:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՍԵՓԱԿԱՆ)

—

ՄՈՒՇ, 4/17 մայիսի
(Թիֆլիսի վրայով)

Մուշի դաշտի բոլոր հայ գիւղերը բռնուած են թիւրք կանոնաւոր զօրքերով և քրդերով, որոնք գործում են ամէն տեսակ ճնշումներ ու գազանութիւններ։ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը, ապաստան փնտրելով, խմբովին դիմում է դէպի Սասունի լեռները, որոնք շրջապատուած են զօրքերով ու բաշիբոզուկներով։

Տեղի ունեցել են արդէն մի շարք արիւնահեղ կռիւներ սասունցիների ու կառավարական ուժերի միջև։

Ապրիլի 12-ին (մարտ 30) սասունցիք կորովի կերպով յետ մղեցին թշնամուն, պատճառելով նրան մեծ կորուստներ։

Ապրիլի 10/23-ին Բիթլիզի վալին եկաւ մի քանի հազար կանոնաւոր զօրքով ու քրդերով, իրեն ուղեկից ունենալով Մուշի և Բիթլիզի հայ եպիսկոպոսներին։ Չնայած եպիսկոպոսների ներկայութեան՝ Շէնքը ենթարկեց զօրքերի յարձակման։ Ապա վալին դիմեց դէպի Սէմալ։ Այստեղ սասունցիները խմբապետ Հրայրի առաջնորդութեամբ՝ յետ մղեցին նրան, սպանելով մի քանի տասնեակ զինուորներ և քրդեր։ Այն ժամանակ, ապրիլի 12/25-ին, վալիի հրամանով, Ս. Առաքելոց վանքի վանահայրը և Բիթլիզի ու Մուշի եպիսկոպոսները՝ հայոց պատրիարքի մի նամակով, գնացին Սէմալ՝ յանձնարարութիւն ունենալով՝ հարկադրելու սասունցիներին անձնատուր լինել։ Սակայն այդ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի խաբուսիկ միջոց, որովհետև ապրիլի 13/26-ին նոյն այն միջոցին, երբ հայ խմբապետները իջնելով բարձունքներից, գնում էին դիմաւորելու յանձնաժողովին՝ նրա հետ գեղաշէնում բանակցութիւններ ունենալու նպատակով, վալին հրաման արձակեց՝ յարձակում գործել սասունցիների վրայ, յանկարծակի բերել նրանց և բռնել խմբապետներին։

Այդ ծրագիրը, սակայն, չ'աջողուեց. խմբապետները, ինչպէս և բնակիչները, կարողացան ժամանակին յետ քաշուել և դիրքեր բռնել։

Զօրքերը, հալածելով բնակիչներին, գնացին Կէլիէկուզանի վրայ, ուր նրանք ընդհարում ունեցան հայ բնակիչների հետ, որոնք շտապով հասնելով բոլոր կողմերից՝ կարողացան աջողեցնել իրենց համախմբումը։ Տեղի ունեցաւ մի արիւնահեղ կռիւ։ Թիւրքերը յաղթուեցին և յետ մղեցին, թողնելով կուի դաշտի վրայ 160 մեռած, բազմաթիւ վիրաւորներ և հրացաններ։ Հայերից սպանուեցին 7 հոգի, որոնց թւում և խմբապետ ՀՐԱՅՐ. վիրաւորուածները 8 են։

Ապրիլի 14/27-ին վալին ստացաւ նոր օգնական զօրք։ Սպասւում է մի նոր ընդհարում հայերի և թիւրք զօրքերի միջև։

Մանրամասները նամակով։

ՈՒՐՄԻԱ, 4/17 մայիսի

Սասունի պաշարումը շարունակւում է։ Թիւրքական զօրքերը՝ 7 վաշտով հիւսիսից և 5 վաշտով հարաւից՝ շրջապատել են երկիրը։ Քրդական աշիրէթներ միացել են զօրքին։ Հայկական խմբերը, խմբացած դիրքերում, վճռել են դիմադրութիւնը շարունակել՝ նկատի ունենալով Բիթլիզի վալիի խաբեբայութիւնը։ Ընկուզնակ, Արդիսու, Քոռխու, Տելաւէ, Կէլիէկզնման գիւղերը այրուած են։ Անապատան մնացած ժողովուրդը դիմած է Կէլի։ Բիթլիսի վալին իբրև պատանդ՝ պահում է առաջնորդին և հայ ժողովրդի ներկայացուցիչներին։ Լուր կայ, որ քրդական մի ցեղապետ ստացել է սուլթանից մեծ գումար՝ հայկական ջարդ կազմելու համար։ Վանի հայ ազգաբնակութիւնը շատ անհանգիստ է Սասունի դէպքերի պատճառով, ինչպէս և կովկասեան սահմանագլխի հայութիւնը։

ԹԻՖԼԻՍ 5/18 մայիսի

Մարտի 28-ին պատկանելի ցեղին պատկանող քրդեր թալանել են Տալաւէ հայ գիւղը, ապա թւով 200 արշաւել են Կէլի հայ գիւղի վրայ։ Սասունցիների հետ սկսել է կռիւ. քրդերից ընկել են 25 մարդ, հայերից՝ 1։

ՄՈՒՇ, 12/25 մայիսի
(Թիֆլիզի զծով)

Մայիսի 3-ից սկսած մօտ 15 հազար թիւրք զինուորներ և քիւրդ աշիրէթներ՝ հմամաձայն կառավարական կարգադրութեան, բռնութիւններ են կատարում։

Ժողովուրդը ապաստանել էր Կէլիէկուզան։ Նա անկարող եղաւ միանալ Անդրանիկին և հայ կուռող խմբերին, որոնք յետ քաշուելով թիւրքաց մեծաքանակ զօրքի դիմաց՝ դիրք էին գրաւել անմատչելի լեռների վրա։ Զօրքը շրջապատեց Կէլին և սկսեց կատաղի թնդանօթաձգութիւն։

Սասունի և Մուշի դաշտի միջև յարաբերութիւնները կտրուած են։

Աւելի քան 200 պառաւ կանայք, ողջոյնի վիճակի մէջ, բերել են Մուշ, հաւատացնելու համար, որ ազգաբնակութիւնը չէ վնասուած։

Մուշի առաջնորդը և մեծամեծները, որոնց ստիպեցին ուղեկցել զօրքին՝ Սասուն գնալիս, բռնի միջոցների ազդեցութեան տակ ստորագրեցին սուլթանին ուղղած երախտագիտական մի ուղերձ։ Դրանից յետոյ նրանց բերեցին Մուշ, որպէսզի նրանք վկայ չլինեն Կէլիի թալանին և կոտորածին։

Սասունի դէպքերը կրկնւում են և Մուշի դաշտի վրայ։ Բերդպի գիւղը պաշարուեց և հրդեհի մատնուեց զօրքի ձեռքով։ Բնակիչները ենթարկուեցին կոտորածի։

Երկրին սպառնում է սով, յարաբերութիւնները դադրած լինելով։

Մուշի մէջ տիրում է մոսկում. կեանքը կանգ է առել։ Սպասւում է ընդհանուր աղէտ։

Ֆրանսիական հիւպատոսը հասաւ։

ՍԱՍՈՒՆ, 12/25 մայիսի
(Բազուի վրայով)

Մայիսի 3-ին (ապրիլ 20), մօտ 10,000 թիւրք զինուորներ, 15 թնդանօթներով, միացած 6 հազար քրդերի, պաշարեցին և ռմբակոծեցին Կէլիէկուզան. աւելի քան 100 ռումբ պայթեց։ Հայերը պահպանում են իրանց դիրքերը։ Մայիսի 4-ին տեղի ունեցաւ նոր ռմբակոծում։ 200 ռումբ աւերեց գիւղը։ Գիշերը՝ տղամարդիկ բարձրացան Անտոթ լեռը, Անդրանիկի, Վահանի և Գէորգի ղեկավարութեամբ, տանելով մթերքները։ Արական սեռից հայերի կորուստը աննշան է. սակայն խաղաղ և անզէն ժողովուրդը ենթարկուեց կոտորածի։ Այրուած են բազմաթիւ գիւղեր։ Մի քանի հարիւր երեխաներ և հասակաւոր կանայք տարուեցին Մուշ, ենթարկուեցին տանջանքի և բանտարկութեան։ Հաղորդակցութիւնը Մուշի հետ ընդհատուած է։

ԹԱՒՐԻԶ, 14/27 մայիսի
(Հնդաեւրոպական գծով)

Վանի մօտ ճանապարհորդ հայեր ենթարկուեցին յարձակման քուրդ ու թիւրք զինուորների կողմից։ Շատ մարդիկ են սպանուած։ Ղզլաս գիւղը մատնուեց աւերման։ Լեմ կղզում եկեղեցին աւերուեց և թալանի մատնուեց։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

—

Վիեննա, 20 ապրիլի

Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ՝ Սասունի շրջանում տեղի են ունեցել լուրջ կռիւներ զօրքերի և հայ ապստամբների միջև։ Այս վերջինները թուով 2,000 եկած են մեծ մասամբ Իուսատանից և Պարսկաստանից։ Կռիւները, անշուշտ, ծագել են այն պատճառով, որ ապստամբապետ Անդրանիկ մերժել է բանակցութեան մտնել տեղական իշխանութիւնների հետ՝ անձնատուր լինելու մասին։ Զօրքերը ունեցել են 20 հոգի սպանուած և 23 վիրաւոր։ Ապստամբների կորուստը յայտնի չէ։ Տալորիկի շրջանի 12 գիւղեր աւերուած են, յայտնի չէ՝ ապստամբնե՞րի թէ քրդերի ձեռքով։

Կ. Պոլիս, 2 մայիսի

Սասունից եկած վերջին լուրերը հաղորդում են, որ քրդերը յարձակուած լինելով Սասունի մօտ գտնուող մի քանի գիւղերի վրայ՝ հայ յեղափոխականները իմբապետ Անդրանիկի առաջնորդութեամբ շտապով օգնութեան հասան իրենց հայրենակիցներին, քշեցին և կոտորեցին բաղմաթիւ քրդեր։

Կ. Պոլիս, 5 մայիսի

Անգլիական դեսպանատունը, յորդորելով ընդհանուր քայլեր անել՝ Բիթլիզի վիլայէթում հայկական շարժման և քրդական բռնութիւնների մեծ ծաւալումը արգելելու համար,—ֆրանսիական և ռուսական դեսպանները առաջարկել են իրենց կառավարութիւններին՝ հրահանգել տեղւոյն հիւպատոսներին՝ համապատասխան քայլեր անել թիւրքաց իշխանութիւնների հետ միասին։ Այդ քայլերը պիտի արուէին արդէն և յետաձգւում են, որովհետև Բիթլիզի համար նշանակուած ռուսական հիւպատոսը մինչև օրս դեռ տեղ չէ հասել։ Բայց քանի որ զինուորական գործողութիւնները արդէն սկսած են՝ ռուսաց կողմից ոչէ միջամտութիւն այլևս նպատակայարմար չէ դիտուում։ Սասնոյ շրջանում վերջին օրերս տեղի ունեցած կռիւների մասին ստոյգ տեղեկութիւններ չկան։ Քրդերի մասնակցութիւնը այդ կռիւների մէջ՝ կասկածելի է թուում։ Կէնջի միթէսարիֆը մի քանի անգամ հեռագրել է, որ հայկական շարժման առիթով մահմեդականները շատ գրգռուած են և դժուար կըլինի արգելք լինել բռնի ճնշումներին։

Կ. Պոլիս, 6 մայիսի

Բիթլիզի վալին հաղորդում է տեղս ուղղած մէկ հեռագրի մէջ, որ նա գրաւել է կէլիէկուզանը Սասունի շրջանում։ Մի երկրորդ զօրագունդ, բաղկացած երկու վաշտից՝ դիմել է դէպի Տալորիկ՝ պաշարելու Անդրանիկի ամուր բանակը։

Կ. Պոլիս, 8 մայիսի

Նորից ուղարկեցին եօթ վաշտ զօրք Սասնոյ լեռներում ապաստանած հայերի դէմ, որովհետև նրանց հրամանատար Անդրանիկը հրաժարում է անձնատուր լինելուց։

Կ. Պոլիս, 12 մայիսի

Թիւրքաց վկայութիւնների համեմատ՝ Սասնոյ շրջանի հայ յեղափոխականների ամուր դիրքերը մեծ մասամբ աւերուած են և ապստամբապետ Անդրանիկի համարեա բոլոր խմբերը ցրուած (՞)։ Այժմ հետամուտ են նրանց։ Բիթլիզի և Մուշի հայ եպիսկոպոսները, որոնք ուղեկցում էին վալիին՝ ապստամբապետ Անդրանիկին անձնատուր անելու նպատակով, տուել են հեռագրով իրենց հրաժարականը, որ սակայն, պատրիարքը՝ ի նկատի առնելով այնտեղի կացութիւնը՝ չէ կամենում ընդունել։

Զանազան դեսպանատներ բարեկամական խորհուրդ են տուել Բ. Դրան՝ հրահանգելը որ հայ յեղափոխական խմբերը մաքրելու միջոցին՝ քրդերն ու զօրքերը անպայման խոյս տան ծայրայեղ միջոցներից, քանի որ կամիտէն կարող է չափազանցնել ու շահագործել նրանց՝ անդրագոյն պրօպագանդի համար։ Թիւրքաց վկայութիւնների համեմատ՝ մի հայ ասպատակային խումբ Երևան է եկել Էրզրումի մօտ, մի ուրիշը՝ Վանի մօտ։

Բաթում, 14 մայիսի

Բիթլիզից ստացած տեղեկութիւնների համեմատ, 700 հոգի սպանուել են թիւրքերից և 900 հոգի հայերից (՞)։ Նօրմալ կեանքը խանգարուած է։ Կենսական մթերքների գները կրկնապատկուել են։ Հայ ազգաբնակութեան սպառնում է սով։ Զբնայած դրան, հարկահանները շարունակում են շարթել և իշխանութիւնները ստիպում են բնակիչներին՝ ստորագրել գոհունակութեան ուղերձներ։

Կ. Պոլիս, 14 մայիսի

Թիւրք իշխանութիւնները դժգոհ են Բիթլիզի և Մուշի եպիսկոպոսներից, որովհետև նրանք չեն կամեցել ստորագրել վալիի ձեռքով խմբագրուած մի յայտարարութիւն, որի համեմատ՝ իբր թէ բռնութիւնները սկսել են ոչ թէ քրդերի, այլ հայերի կողմից։ Այդ պատճառով երկու եպիսկոպոսներն էլ հրաժարական են տուել։

Կ. Պոլիս, 15 մայիսի

Բիթլիզի և Մուշի առաջնորդները, տեղւոյն վալին և մի քանի հայ երևելիներ բարձրացան Սասունի լեռը, յեղափոխականներին գտնելու և նրանց խորհուրդ տալու, որ հրաժարուին որևէ ցոյցերից, քանի որ սուլթանը խոստացել է թոյլ տալ նրանց ազատ հեռանալ, եթէ անձնատուր լինեն։—Բիթլիզից հաղորդուած լուրը՝ թէ պատկանելի քիւրդ ցեղը Սասնոյ շրջանի հայ գիւղերի վրայ յարձակում գործելով՝ այրել է վեց գիւղ,—թիւրքերի կողմից հերքուում է, սակայն անհիմն չէ թուում։ Յամենայն դէպս յարձակումներ արդէն տեւի են ունեցել խմբապետ Անդրանիկի մարդկանցից գրաւած մի քանի գիւղերի վրայ։ Արդեօք յարձակողները քրդերն են, թէ՞ զօրքերը,—այդ դժուար է ստուգել։ Քրդերը շատ գրգռուած են Անդրանիկի գործողութիւններով և դժուար պիտի լինի սանձահարել նրանց։

Կ. Պոլիս, 17 մայիսի

Մուշի անգլիական ու ռուսական հիւպատոսները և Վանի ֆրանսիական հիւպատոսը հրաման ստացան իրենց կառավարութիւններից՝ համաձայնութեան գալ՝ քննութիւն սկսելու Բիթլիզի վիլայէթի կացութեան մասին։

Բիթլիզից ստացած մասնաւոր տեղեկութիւնների հա-

մեմատ՝ Անդրանիկի խմբերը անհնարին է գտնել։ Մուշի միւթէսարիֆի մուավինը, Նշան էֆէնտին, գնացել է փնտրելու Անդրանիկին և բանակցելու նրա հետ անձնատուր լինելու պայմանների մասին։

Տեղիս թիւրքական շրջաններում պատմում են, որ բազմաթիւ հայ և քուրդ ընտանիքներ Սասունից և շրջականներից փախել են դէպի Մուշ, ազատուելու համար հայկական խմբերի հալածանքներից (!!)։ Նոյն շրջաններում այն կարծիքի են՝ որ օտար հիւպատոսների ներկայութիւնը Մուշում կարող է խրախուսել հայ խռովարարներին։

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակներով)

—

Սասուն, 5 մարտ

Մեր վիճակը հետզհետէ կրիտիքական կը դառնայ։ Ցունանի դէպքի մասին ձեզ գրուած է երկար, ինչպէս նաև Տաբլկայ և Հեղինի գործերու մասին։ Կառավարութիւնը իր միջոցները ներածին չափով՝ կ'աշխատի մեզ շրջապատել ամէն կողմէ։ Երկու կէտերու վրայ դիրքեր բռնած ենք։ Ամէն օր կառավարութիւնը կը մօտենայ, մաս-մաս զօրքեր կը բերէ Սղերդէն, Տիգրանակերտէն։ Զօրքերը լցուած են մեզ մօտիկ տեղեր, Սաղտուն, Փասուր, Փարկա, Ղայսեր։ Կը լսենք, որ պիտի գան նաև Պոզկանք և Կէլիէմսուր։ Իսկ եթէ հասան Կարինէն և Խարբերդէն սպասուած զօրքերը—մեր լսածին նայելով—կառավարութիւնը զանոնք պիտի լեցնէ Դաշտի գիւղերը և մեր անցքերը փակէ, ատով մեզ դաշտէն անջատելով բոլորովին։

Այսպէս կամ ջան-բէզար կոչուածները՝ խումբ-խումբ մեր կուգան Դաշտի գիւղերը։ Մուշի մէջ պահեստի զինուորները հաւաքեցին. կը լսի որ համիդիէներ ալ պիտի կանչեն։ Կառավարութիւնը իր պաշտօնեաներով, շէյխերով ու մոլլաներով կը ջանայ իրարու թշնամի քիւրդ ցեղերը հաշտեցնել և բոլորը միացուցած՝ մեզ դէմ գրգռել։

Եթէ ձիւնը չվերցած թշնամութիւնները և կռիւը սկսի, բ ա ւ ա կ ա ն դ ժ ւ ա ր կ'ըլլայ մեր գործը. իսկ եթէ խաղաղութեամբ հասնինք մինչև մայիս՝ այն ատեն, ինչպէս կ'ըսեն, Աստուած ողորմած է...

—

Սասուն, 8 մարտ

Կառավարութեան շարժումներէն կը կասկածինք, որ մօտերս յարձակում կը գործէ և կրսպասենք ընդհարում մը, բայց օդերու յանկարծական խստութիւններ, ձիւնի նոր տարափներ քանի մը օրով յետաձգեցին այդ կասկածներու իրականացումը։

Այս օրերս տեղեկութիւն առանք, որ Մստրը Շիբլի, որ ժամանակին Սասնոյ քննիչ յանձնաժողովի անդամ էր, հայաբնակ հինգ նահանգներու վրայ անգլիական հիւպատոս կարգուած է։ Արդէն այդ նահանգներու մէջ անգլիական կառավարութիւնը իր հիւպատոսները ունի։ Այս նոր անուանումը ինչի՞ հետևանք է, կամ Շիբլին ի՞նչ նոր պաշտօն ունի — բան մը, որ մեզ շատ կը հետաքրքրէ։

Բարձրագոյն կառավարութիւնը կ'ուզէ շատ զօրք ղրկել Մուշ, բայց տեղը գտնուած զօրքերը արդէն վերին աստիճանի նեղ դրութեան մէջ են։ Ուստի Մուշի կառավարիչ փաշան հաղորդեր է ուր որ պէտքն է, թէ իրենք չեն կարող նոր զօրքերը պահել, քանի որ արդէն եղածները սոված ու մերկ են և խնդրել է որ եկող զօրքերը ուտելիքնին հետերնին բերեն։

Շատ մը թիւրք զինուորներ փափագ ունին փախչելու և մեզ մօտ գալու։ Արդէն չուշ մը և երեք զինուորներ իրենց զէնքերով հասած են մեզ մօտ։ Ուրիշներ ալ պիտի գան։ Եկած զօրքերը շատ խեղճ վիճակի մէջ են։ Կոիւներ սկսելուն պէս, սակայն, ատոնց արտասահման պիտի ղրկենք. կրնայ պատահիլ, որ կուի ատեն մեզ համար վտանգաւոր ըլլան։

—

Մուշ, 27 մարտ

Կառավարութիւնը ամսոյս 24-ին բանտարկեց տեղւոյս առաջնորդը և ազգային ժողովի 12 անդամները՝ Ցունան գիւղի աւերման առթիւ սուլթանին ղրկած բողոքագրին պատճառաւ։

Կառավարութիւնը Ցունանցիներու բերնէն կեղծ հանրագիր մը պատրաստած է՝ իրողութիւնները հերքող՝ և բռնի ստորագրել կուտայ Մշոյ դաշտի գիւղացիներուն։

Ձերբակալութիւնները անհամար են։ Մուշը շրջապատուած է 5-6,000 զօրքերով։ Կարինէն, Վանէն 2 գունդ զօրք հասան և զետեղուեցան Առաքելոց, Սբ. Յովհաննու, Սբ. Կարապետի վանքերը և Ջրիկ, Խասգեղ, Կառնէն, Առինջվանք և Սուլուխ գիւղերը։ Մէկ քանի գիւղերու մէջ ալ տեղ կը պատրաստուի գալիք զինուորներու համար։

—

Մուշ 27 մարտ

Ամսոյս 24-ին, աւագ շաբթու չորեքշաբթի օրը, բարբարոս կառավարութիւնը, անշուշտ, սուլթանի իրատէով, հարցաքննութեան կոչեց հայոց առաջնորդը, Գնէլ վարդապետ Գալէմքեարեան և խառն ժողովոյ 12 անդամներն, 6 կղերականք և 6 աշխարհականք, ասկէ առաջ՝ Ցունան գիւղի ծանօթ դէպքին առթիւ՝ փետրուար 22 թուականաւ կայսերական պալատ ուղղած բողոքագրին համար։ Ձանոնք հարցաքննելով՝ բանտարկեցին։ Ինչպէս կ'երևի, յունանցիներու կողմէ կեղծ հանրագրութիւններ պատրաստելու նպատակով ձեռք առնուած է այդ միջոցը։ Հիմա գիւղի ռէսներն (գիւղապետ) կը հաւաքէ, որպէս զի խաբէութեամբ և կամ բռնութեան ներքև հանրագրութիւն առնէ թէ՝ երկիրը խաղաղ է. ո՞վ գիտէ ինչ թոյներով լեցուն գրութիւն մը հեղինակած է։ Ձերբակալութիւններ դեռ պիտի շարունակէ, քաղաքն արդէն չորս կողմէն պաշարման վիճակի մէջ դրած է, մօտերս 10-15 թապուր զօրքերով Սասունն ալ պաշարման ենթարկուեց, և, ինչպէս կըսուի, ահագին զօրաց փոխադրութիւններ պիտի ըլլան հոս։

—

Սասուն, 28 մարտ

Այս շաբաթ պատրիարքարանէն պաշտօնագիր մը հասած է Մշոյ առաջնորդին սա իմաստով. „Իմանալով Յարօնոյ հայ ժողովրդի ցաւալի կացութիւնը և անոր սպառնացող վտանգը, դիմեցի սուլթանին։ Սուլթանը խոստացաւ ամէն կերպ պաշտպանել հայ ժողովուրդը և երկիրը հետզհետէ բարելաւել, պայմանով որ Սասուն ապաստանած և բնակած յեղափոխականները յանձնուին։ Այս նպատակով կառավարութեան և առաջնորդարանի կողմէն պատգամաւորներ պիտի գնան յեղափոխականաց հետ բանակցելու“։ Կը յաւելու նաև, որ եթէ առաջի բանակցու-

թեամբ չհամաձայնենք, պէտք է լուր տրուի պատրիարքարան, որպէս զի երկրորդ բանակցութիւն մը պատրաստէ։

Յեղափոխական շրջանները այդ պաշտօնագիրն, իհարկէ, ինկատի առնելու տրամադրութիւն չ'ունին բնաւին։

—

Սասուն, 7 ապրիլ

Հաւանօրէն ընդունած կ'ըլլաք 31 մարտ թուակիր նամակը, որուն մէջ համառօտակի գրած էի նոյն օրը պատահած կռուի մասին։ Իրերը մինչև այս րոպէն նոյն դրութեան մէջ են, բայց մօտիկ ապագան սպառնալից կը թուի։ Այդ փառաւոր ճակատամարտը, որ անգամ մը ևս վեր հանեց ֆէդայու և սասունցոց պատմական կորձութիւնը, մեծ սարսափ թողեց ամբողջ քրդութեան վրայ։ Թիւրք զօրքերը իրենց զօրանոցներու մէջ դողացին. ասոր հետ մէկտեղ նաև գրգռեց անոնց զայրոյթն ու վրէժխնդրութիւնը։ Ամբողջ շաբաթէ մը իվեր հաւարձգած են չորս կողմ, և պատրգանցի, հազէտանցի, սօլուխցի և այլ աշիրէթներ խուռն բազմութեամբ կը հաւաքին Շէն։ Հրացանի ձայներ միշտ կը լսին այն կողմէ։ Օրէօր արշաւանքներու կրսպասենք։ Ղղլաղաճէն մաս մը զօրք ռազմամթերքով հանած են, անշուշտ եղածներուն թև ու թիկունք ըլլալու և օր մըն ալ ըսելու թէ, „մենք գնացինք խաղաղացնելու, բայց չյաջողեցանք“։

Մշոյ խլամ տարրը, որ միշտ առիթի մը կրսպասէ թէ քաղքի և թէ դաշտի հայերը կոտորելու և թալնելու, վերստին յուզեցաւ։ Գումարումներ տեղի կ'ունենան... Կառավարութիւնն ալ գործի սկսաւ. անմիջապէս պակսիմաթներ եփել սկսաւ և զօրաց չարուխները պատրաստեց, յարձակում գործելու նպատակով։ Քրդերը բողոքելու գացեր են կառավարութեանը, այն ալ պատասխաներ է՝ „Մի թէ մենք ձեզի ըսինք, որ 2-300 մարդով երթաք ֆէդայիներու և Սասնոյ վրայ“։ Ուրախալի է որ, թէ կառավարութիւնը և թէ խլամ տարրը կը խոստովանեն, թէ քրդերն են նախապատճառը Տալաէի կռուին։

Այդ փառաւոր ճակատամարտի մէջ 31 քիւրդ սպաներ են և շատերն ալ վիրաւորուեր։ Շէնըքցի երկու հայ վիրաւորները լաւանալու վրայ են։ Մուրադ և ընկերներ առիւծի պէս կռուած են։ Տեղացիք շատ կը գովեն զՄուրադ։

Բաղէշի կուսակալը ապրիլի 5-ին հասել է Մուշ։ Խլամ տարրը, շէյխերով, իմամներով ներկայացեր և խնդրեր է, որ եթէ կառավարութիւնը կամենայ, իրենք կարող են մէկէն ջնջել ամբողջ հայութիւնը։ Կուսակալը անոնց գլխաւորները տարեր է իր բնակարան. թէ ինչ են խօսեր, ինչ խորհեր — չենք գիտեր։

Կուսակալը կը ջանայ սիրաշահել հայոց առաջնորդը և գլխաւորները, անոնց բերնէն շնորհակալութեան ուղերձ մը փրցնելու համար։

Վտանգը մէկ կողմէն չէ, որ կրսպառնայ մեզ. խիանցի քիւրդերն ալ, բագրանցիներն ալ իրար քով կը հաւաքուին և կրսպառնան յարձակիլ Իշխանձորի և Տալորիկի վրայ։ Քիւրդերու այս սպառնական ձեռնարկներէ՝ անոնց մերձաւոր եղած հայ գիւղեր վառեցին իրենց տուներ և քաշուեցան Սասուն։ Այսպէս ապրիլ 5-ին վառեցին Ընկուզնակ և Արծկոնք գիւղեր և ժողովուրդը լեցուեցաւ Իշխանձոր։ Ապրիլ 6-ին վառեցին Քօրախու և Հարևան գիւղ մը ու բնակիչներով քաշուեցան Տալորիկ։ Պողրգանց մէջ ալ զօրք է գացեր, այն կողմէ ալ կասկած կայ։ Ապրիլ 6-ին վառեցին նաև Կրմաւ և Զէյնէկցիք գիւղեր և բնակիչք հաւաքուեցան Տարբկ։ Հետզհետէ իրար վրայ կը սեղմուինք. չորս կողմէն եկողներ շատ կան, բայց սովէ կը վախնանք։ Ժողովուրդին աշնանէ իվեր արգելած է Մուշ երթալը։ Առանց Մուշ երթալու դժուար է ապրել. հաց պակաս է.

Սովը մեծ աւերումներ պիտի գործէ։

Առայժմ հայոց ուժեր բաժնուած են երեք կէտերու վրայ—Շէնըք, Տարբկ և Իշխանձոր։ Կեդրոնատեղին պիտի ըլլայ Կէլին։ Տալորիկէն օգնութիւն կը պահանջեն։ Դեռ գիծերը բաց են և հայերը անհամբեր կրսպասեն Պուրակէն գալիք ուժերուն։

—

Մուշ, 11 ապրիլ

Յունան գիւղի դէպքի ամփոփումը տեղւոյս առաջնորդը խառն ժողովոյ հետ միասին սուլթանին տեղեկագրած ըլլալուն և միւս կողմէ եւրոպական թերթերու մէջ երևցած ըլլալուն համար՝ սուլթանը խիստ հրաման է արձակեր։ Եւ իբրև ատոր հետևանք՝ աւագ չորեքշաբթին բանտարկեցին առաջնորդը, կրօնական և քաղաքական ժողովոյ բոլոր անդամները։ Մեծ յուզում և տրխրութիւն տիրեց ամբողջ Մշոյ և շրջականերու վրայ։ Բանտարկեալները մինչև Զատկի կիրակի գիշեր բանտ մնացին. գրեթէ ամբողջ քաղաք մեռած էր։ Անոնք բանտարկուած ժամանակ մի հեռագիր տուեցաւ պատրիարքին, որը այդ հեռագրի հետևանօք պալատ կերթայ, կը խնդրէ սուլթանին և նա ալ ներում կ'ընէ ատոնց, որպէս թէ ոճրագործ են։ Շմոռանանք ըսելու, որ ժանդարմ Ատիլային յանձնուած էր ատոնց հարցաքննութիւնը և որոշուած է եղել աքսորել։

Կրօնական ժողովոյ անդամներն են՝ Վահան վարդ. Երիցեան, Ց. քահ. Տէր Յովհաննէսեան, Տ. Յովհաննէս, Տ. Մուշեղ, Տ. Սահակ և Տ. Եղիշէ քահանաները։ Քաղաքական ժողովոյ անդամներն են՝ Սէրունեան Նազարէթ էֆէնտի, Սահակեան Մարտիրոս աղա, Բդէնան Մ. Կարապետ, Զոլիկեան Գասպար, Մովսիսեան Պօղոս և Զբենց Ամենակ աղան։

—

Մուշ, 11 ապրիլ

Յեղափոխականներու և քրդաց առաջին ընդհարումը (վերջինները կառավարութեան դրդմամբ) տեղի ունեցաւ նախորդ ամսու վերջին օրերուն մէջ, ճիշդ Ս. Յարութեան օրը։ Առաջին առթիւ մերինները կ'զգուշանան քրդաց հետ բաղխում ունենալէ, իրենց տրուած հրահանգներն ու հրամանները ի չարը չգործածելու համար։ Երբ նեղ կը մնան՝ կրստիպուին իրենք ալ գնդակով պատասխանել և յետ կը նահանջեն։ Իրենցմէ մոկունքցի ԻՍՐՕՆ կրսպաննուի, երկուքն ալ կը վիրաւորուին։ Իսկ քրդերէն մօտ 40 հոգի սպաննուալ և վիրաւոր։

Այս դէպքին վրայ կառավարութիւնն ու խլամութիւնը գազանացած՝ անմիջապէս հրահանգ ղրկեց բոլոր քիւրդ աշիրէթներուն։ Ատոնք ամէնքն ալ, ստուար բազմութեամբ մը փութացին հաւաքուիլ Խուլբ գաւառակի Շէն ըսուած գիւղը, մերիններէն 4 ժամ հեռու։ Նոյնը ըրին չորս կողմէն թէ քրդեր և թէ Տիգրանակերտէն ու կէնճէն հանող զօրքեր, որոնք արդէն կանխաւ եկած էին։ Բաղէշի նորեկ կուսակալն ալ փութաց հոս. անկէ երկու օր վերջ՝ Բաղէշի առաջնորդը։ Կուսակալը իր հետ բերած

էր Բաղէշի հայ իտարէի երկու անդամները, պաշ միւթիր ումումին, հարցաքննիչն ալ։ Երկու օր առաջ կուսակալը խմբագրելով ինքնագով մի հանրագրութիւն, տեղական իսլամ՝ պաշտօնէից քննել տուց և կանչելով Բաղէշի և տեղւոյս առաջնորդներն ու վարչութեան անդամներ՝ ճնշումներով պահանջեց, որ իրենք ալ կնքեն այդ հանրագրութիւնը։ Հանրագրութեան մէջ ասուած էր որ բանակցութեան մտան յեղափոխականներու հետ, որոնք „աւազակներ և իշխանութեան հանդէպ խռովակիչներ“ են։ Առաջնորդը և հայ վարչական անդամները բացարձակ կերպով կը մերժեն կնքել. ասոր վրայ կուսակալը զայրացած, երէկ, ապրիլ 10-ին, ժամը 9½-ին, առաջնորդներն ու ժողովոց անդամներ, բռնի կերպով ձիերու վրայ նստեցնելով Սասուն բարձրացաւ, հինգ թաբուր զօրքով, որպէս զի հոն իր խմբագրած հանրագրութիւնը բռնի կնքել տալով, անմիջապէս քրդերով և զօրքերով յարձակում կատարէ և ոմբակոծէ։

—

Մուշ, 12 ապրիլ

Ցարօնոյ և Սասնոյ աշխարհ յուզմունքի մէջ է և հայ ժողովուրդ արեան պատանք հագած՝ թշնամուն կը նայի։ Արիւնարբուներով լեցուցած է Մուշ, գիւղեր ու լեռներ։

Մարտ 30-ին սարսափելի կռիւ մը ծագեցաւ Սասնոյ գաւառի Կէլիէկընման մէջ։ Մուրադ, Իսօն և Իսրայէլ գնացած էին հոն՝ հայ ընտանիքներ անկէ փոխադրելու համար։ Պատրկանցի քիւրդերը, 400 հոգիէ բաղկացեալ, կը յարձակին անոնց վրայ։ Կռիւը 32 քիւրդ կըսպաննուին և 20-էն աւելի կը վիրաւորուին, իսկ հայ քաջերէն միմիայն մոկունքցի ԻՍՐԱՑԷԼ կը նահատակի և երկու շէնքցի տղայ կը վիրաւորուին։

Այս լուրը ծանօթ մօտ Ապտիւլայի ձեռքով կը հեռագրի Մշոյ կառավարչին և Բաղէշի կուսակալին։ Մշոյ կառավարութիւնը հազարէն աւելի հեծեալ ոստիկաններ հանեց, հաւաքեց քիւրդ ցեղապետներ և քիւրդեր 1,500-էն աւելի։ Իսկ կուսակալը 4,000 զինուոր, վեց թնդանօթ, Բաղէշի և Մուշի առաջնորդները, քաղաքական ժողովոյ 12 անդամներով Խզլաղաճի և Քիւրդմէյտանի ճանապարհով ուղղակի Խոզմայ լեռան վրայով Շէնքը ու Սէմալ գիւղերը գնացին։ Տիգրանակերտի կողմէն ալ Հազրօ գիւղաքաղաքցի Սէվտին պէյ և Սլիվանայ Հաճի Ռաշիտ աղան եկան՝ ամէն մէկ հազարաւոր զինեալներով։ Սասնոյ և Խուլբայ գաւառները չորս կողմէն պաշարած են։

Այս առաւօտ նամակ առինք քաջ Հրայրէն, որով կը գրէր թէ ահեղ կռիւ մը ծագած է երէկ, ապրիլ 11-ին, որ առաւօտեան ժամ 3-էն մինչև 11 տևած է։ Բազմաթիւ զօրք, ճան-բէզար և աշիրաթ ջարդուած՝ ետ փախած են։ Ցաղթութիւնը հայոցն է։ Մերիներէն և ժողովրդէն 7 հոգի կուոյ մէջ փնկած են, որոնց անուններուն տակաւին տեղեակ չենք։

Թշնամին վրէժ առնելու համար սկսեց քանդել անմեղ գիւղեր։ Այսօր Խզլաղաճ, Գոմեր, Քարձոր, Փողրկով, Տազի-գոմ, Շէխլան, Քիւրդմէյտան, Ուրուղ, Հայկերտ, Սուլուխ, Խաս-գիւղ, Հաւատորիկ — 12 գիւղ գաւառի մէջ զօրքերով լեցուած ֆն։ Ամբողջ ութ օր կ'ընէ, կռիւ ու աւերն սկսեր է. անց ու դարձ բոլորովին դադրած է։

Հեռաւոր հայ եղբայրնե՛ր, ո՞ւր էք, միթէ չէ՞ք լսեր, միթէ չէ՞ք զգար...

Մուշ, 14 ապրիլ

Մեր անձնէր հերոսների արիւնը սկսեց հոսել։ Քրդական յարձակումին, որի մէջ թշնամին տասնապատիկ աւելի զոհ տուց, ահա յաջորդեց թիւրք զէնուորական յարձակումը։

Բացի ապրիլ 11-ի քիւրդերու հետ ունեցած ընդհարումէ, ապրիլ 12-ին և 13-ին թիւրք զէնուորները նոր մեծ յարձակումներ կդաշտարեցին։ Վերջին յարձակումին մասնակցեցին բիւրաւոր քիւրդ և թիւրք։ Շէնքը, Սէմալ գիւղերը վառուեցան։ Թնդանօթի հարուածներով, բացի կէլիէկուզանէն՝ շրջակայ գիւղերը ևս մնասուեցան։ Սասունի ամբողջ երկսեռ բազմութիւնը, մեծ ու փոքրը, լցուել են կէլիէ-Շատերը անպատապար, ձիւներու վրայ, զուրկ օրապահիկէ և զգեստէ։

Ապրիլ 13-ի կռիւը տևած է ամբողջ եօթը ժամ. թէև յաղթութիւնը մերիններին մնաց, այլ թանկ նստեցաւ։ Ցաւով կը յայտնենք, որ անմոռանալի ՀՐԱՑԸԸ նահատակեցաւ 15 ընկերներով. Սկսուհ և Միսակ վիրաւոր են։ Թշնամու կորուստը 40-50 կը հասնի. Վահան, Անդրանիկ ողջ առողջ են։

Ահեղ վտանգի տակ են Ցարօնը և Սասունը։ Դաշտի մէջ պարբերական ջարդեր սկսեր են. շուտով այնտեղ կարող է սկսիլ ընդհանուր կոտորած, եթէ ճար մը չհասնի։

Սասունը այժմ պաշարուած է հետևեալ կերպով — հիւսիսէն՝ Մուշի կողմէն՝ 7 վաշտ զօրքով, հարաւէն՝ Ցալուրիկի կողմէն՝ 3 վաշտ զօրքով ու հազարաւոր քիւրդ աշիրէթներով։ Թիւրքեր ու քիւրդեր զէնքի տակ մտած են։ Սասունի պաշարման մասնակից են մի քանի յայտնի քիւրդ ցեղապետներ։

Ցեղափոխականները և սասունցի հայեր աննկուն և անձնուէր կը կուին. ինչ արած, որ թշնամու բազմաքանակ բանակների դիմաց իրենց սատկապէս կը նեղէ նաև օդի ցրտութիւնը։

—

Մուշ, 18 ապրիլ

Շատ նեղ պարագայի մէջ ենք։ Կուսակալ Ֆէրիա փաշան Մուշ ժամանելով՝ անմիջապէս բարձրացաւ լեռը։ Կանոնաւոր պատերազմ տեղի ունեցաւ։ Սա վարպետութեամբ ցոյց տուց, իբր թէ կը բանակցի տղայոց հետ, իսկ միւս կողմէ զօրքը կը պաշարէր զանոնք։ Ունեցանք կորուստ մը, որ անդարմանելի է, — ՀՐԱՑԻ նահատակութիւնը։ Իր ընկերները միշտ կը պնդէին թէ՝ „եկուր դուն դարձիր, մենք կ'մեռնինք, բայց նա անդադար կը պատասխանէր՝ „այսօր պիտի մեռնիմ“, և նահատակուեցաւ... Հրայրի մարմինը տարին Կէլիէկուզան և թաղեցին մեծ հանդէսով։

15 բանակ կար քաղաքին մէջ, որոնց 10-ը լեռ գնացեր է, ի բաց առեալ քրդերը։ Գեղացիք ալ այդ պատերազմին մէջ հասան օգնութեան և զօրաց աղէկ ջարդ մը տուին. վիրաւորուածները Մուշ բերին և նոր զօրք ուղարկեցին օգնութեան։

Հայերու կողմէն Անգլիայի հիւպատոսին պաշտօնական գրութիւն մը ղրկեցինք, որ հեռագրէ Պոլիս իր դեսպանին։ Կարնոյ հիւպատոսին ալ սուրհանդակ ղրկեցինք։

Սէվալի կուին համար թիւրքեր թնդանօթներ ալ տարեր են։ Սէմալի եկեղեցւոյ սկիհ և բուրվառ քրդերը շուկան բերեր էին, և, երևակայեցէք, ստիպուեցինք մենք գնել։ Աւարին թիւ չկայ, այծ մը 40 փարայի ծախուեր է, եզ մը, կով մը՝ 15 ղուրուշ։

Ախլաթէն խումբ մը երիտասարդներ եկեր են և կ'սպասեն հրահանգի... Կարելի է վերջի նամակս ըլլայ...

—

Սասուն, 18 ապրիլ

Կուսակալը Մուշ հասնելուն պէս՝ կանչեր է մեր առաջնորդն ու հայ գլխաւորները և ասել է. „Թող անձնատուր ըլլան ապստամբները, ապա թէ ոչ զամէնն ալ կ'վերջացնեմ"։ Զօրքերը միացած են քրդերուն։

Ժողովուրդը իրար վրայ կ'դիպչի, շարքերնիս կ'սեղմենք... Լուր կայ, որ քրդեր կը մօտենան. վայրկեանէ վայրկեան արշաւանքի կ'սպասենք։ Ողջ մնացողներ և հեռի ընկերներ թո՛ղ շարունակեն մեր կիսատ թողածները...

—

Մուշ, 18 ապրիլ
(Մասնաւոր աղբիւրից)

Նախորդ նամակս յուսամ՝ որ ստացած էք ժամանակին։ Յարձերու մեր վիճակի տագնապալից դրութիւնը ըստիպեց, որ այսօր ալ սոյն դրութեամբ պարզենք ձեզ մեր արդի ճգնաժամը։

Արդէն լաւ գիտէք, որ յեղափոխականաց կեդրոնը Սասունն է. Սասցն ըսելով կը հասկնանք Կէլիէ-Կուզան, Շէնքը, Սէմալ, Գեղաշէն, Տափրկ, Տալորիկ, Աղբիկ, քիչ ելն շատ մը գիւղեր, որոնք այժմ աստ յիշելու հարկ չկայ։ Վահան, Հրայր և Անդրանիկ ատոնց ղեկավարներն են, շատ լաւ և ընտիր աշխատողներ։

Ակամայից և դժբախտաբար միևնոյն տեղւոյ վրայ երկու քիւրդ գիւղերու մէջ դիպուածով բաղխում ունեցան և այդ ժամանակ 30-40 քիւրդեր սպաննուեցան, իսկ մերիններէն մի հատ կտրիճ տղայ։

Կառավարութիւնը զայդ պատրուակ բռնելով՝ քսան թաբուրի չափ զօրք տեղս լեցուց և տակաւին կը շարունակեն գալ ամէն կողմերէ։ Ահագին պատրաստութեամբ և մեծ թւով զօրք լեռ տարուեցան. նմանապէս ամէն կողմերէ քիւրդեր հաւաքուիլ սկսած են։

Կուսակալը բարձրացաւ լեռ, խաբեբայութեամբ պաշարեց և սոսկալի կռիւներ սկսած է։ Ահաւասիկ շաբաթ մըն է, որ յեղափոխականները և սասունցիք կռուի բռնուած են շատ չարաչար կերպով։ Արդէն երեք անգամ եղաւ, որ բաղխում կունենան. երեք անգամն ալ մերիները յաղթող ելան. թշնամին վրայ ահագին սարսափ ազդեց մերիներուն դիւցազնաբար կռուելը։ 100-ից աւելի զօրք սպաննուած է, անոր կրկնապատիկ ալ քիւրդ. վիրաւորներուն թիւը տակաւին ճիշդ չգիտցուիր։

Այժմ լեռը գտնուած թէ զօրք թէ քիւրդ ընդամէնը 12-14 հազար հոգի են։

Մեր այժմու կացութիւնը շատ անտանելի է։ Հուկայ երթալէ մասամբ դադրած ենք. վաղ առաւօտ ալ բնաւ տներէն դուրս չպիտի կրնանք ելնել, որովհետև այսօր մեր քաղաքէն բաւական թւով հայ կամաւորներ մեկնեցան դէպի կուոյ վայրը, Սասուն, իրենց մասնաւոր զէնքերով և պաշարով։ Նմանապէս դաշտի մէջ եղածները ամբողջն ալ զէնք ի ձեռին պատրաստ են նահատակելու և իրենց արիւնը թափելու ազատութեան համար։

Նշաններէն այնպէս կերևի, որ այսօր գիշեր դաշտի և շրջակայից մէջ ալ՝ հրոսախմբեր պիտի հնչեցնեն բողոքի ձայնը։ Տարօնոյ հայ ժողովուրդը սիրայօժար կը մասնակցի յեղափոխական գործին։

Կը սիրենք հաւատալ, որ հեռաւոր երկիրներու մէջ բնակող մեր ազգակից եղբայրները ընդ փոյթ պիտի գան և օգնութեան հասնին մեզ։

Առաջնորդներ և քաղաքային ժողովոյ անդամներ տակաւին լեռն են կուսակալին հետ և խեղճերը չարաչար կը նեղուին, որովհետև կուսակալը կ'ուզէ հանրագրութիւն մը պատրաստել, ստորագրել տալ ու ղրկել կառավարութեան և դեսպաններուն, ասելով, թէ այդքան արեան թափելուն պատճառը յեղափոխականներ եղան։ Սակայն անկարելի կը թուի այդ գուցէ շատ բացառիկ հանգամանքներ միայն կրնան անոնց ստիպել այդպիսի բան մը ընել։

ՍԱՍՈՒՆԻ ԵՐԵՔ ԿՌԻՒԸ

(Մանրամասներ)

ԿԷԼԻԷԿԸՆՄԱՆԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

(Մարտ 30)

—

Սասուն, 31 մարտ

Կռիւը սկսաւ։ Թէև շատ կը փափագէինք, որ երբէք քրդերու հետ գործ չունենանք և անոնց բարեկամութիւնը շահելու համար ջանք չէինք խնայեր, բայց ի՞նչ օգուտ, որ կառավարութիւնն ալ միւս կողմէն ամէն ճիգ կը թափէր այդ կոյր ամբոխը մեզ դէմ լարելու և գրգռելու։ Ու վերջապէս յաջողեցաւ։

Առաջին ընդհարումը եղաւ երէկ։ Պատմենք.

Գրած էինք Տաբրկայ դէպքի մասին, ուր քրդեր սպաննել խորհած էին Անդրանիկը։ Այս պատճառով գրաւեցինք Տաբրկը և քշեցինք քրդերը։ Այս դէպքը բաւականին յուզեց քրդերը, բայց մենք ջանացինք հանդարտեցնել զիրենք։ Կառավարութիւնն ալ ի նպաստ իրեն գործածեց այս փաստը։

Անտոքը գիտէք, ինչպէս նաև Կէլիէկընման, Կէլիէմսուր, և Շէն։ Շէնի մօտերը կայ „Տալաւէ գոմ" ըսուած տեղը, ուր 7 տունի չափ հայ կը գտնուին։ Այդ կողմերի քրդերը, պատրգանցիք խորհուրդ կ'ընեն որ այդ 7 տուն հայերուն ունեցածները թալնեն և զիրենք ալ գերի պահեն։ Հայասէր քիւրդ մը այդ խորհուրդը կը յայտնէ հայերուն. ասոնք ալ անմիջապէս լուր կը ղրկեն Շէնը և Սէմալ, որպէս զի գան զիրենք փրկեն այս փորձանքէն։

Այս միջոցին տասնապետ Մուրատը, գոմերցի Խսօն և մօկունքցի Խսրօն դաշտէն դարձած — ուր գացած էին գործով — կը գտնուէին Յէմալ։ Խորհուրդ կ'ընեն և երկու գիւղէն բաւական զինուած ու շալակաւոր մարդ առած՝ կերթան փոխադրել գիշերով այդ խեղճ հայերը։ Լաւ մեզ ալ լուր տալէն վերջ՝ ճամբայ կ'ելլեն։ Ասի կ'ըլլայ Զատկի առաջին օրը, մարտ 27-ին։

Բայց դեռ ասոնք ճամբայ չելած, լուր կուգայ, որ քրդերը յարձակում՝ գործած են Տալաւէի վրայ, թալներ են Միրքօրի տուն և տղան ալ տարեր են. իսկ մնացած հայերը բանտարկեր են իրենց տուները։ Մուրատ և ընկերներ, ինչպէս նաև Շէնքքցի զինուոր Ղաղար և մեծ բազմութիւն Շէնքքէն և Սէմալէն, կերթան Կէլիէկընման։ Մերիները հոն մնալով, մնացածները կ'իջնեն Կէլիէմսուր։ Ապա մերիները կուղղուին Տալաւէի վրայ. բոլոր քրդերու տուները հսկողութեան տակ կ'առնեն և այն կողմերը

ՄՈՒՇ–ՍԱՍՈՒՆ

Հ. Ց.

1904, Թբլիսի. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ.

գանուած հայերը հետները վերցնելով՝ տուները կը վառեն։ Այս դէպքը կը պատահի Զատիկ օրուայ առաջին գիշերը։ Քրդեր Տալաւէն թողնած են շաբաթ օրը։ Մերիններ Տալաւէն հետերնին կը բերեն նաև քրդացած հայ մը, անունը Պալին, կինն ալ քիւրդ։ Քրդեր երբ կ'իմանան որ հայեր վառած են իրենց տունները և քաշուած դէպի Կէլիէկլենման, շորս կողմէն կը հաւաքուին մերձաւոր տեղ մը։ Երէկ առաւօտ այդ քրդացած հայ Պալին կը փախչի դէպի քրդերու կողմը. քանի մը տղայ կը տեսնեն, ետևէն կը վազեն բռնելու և մինչև քրդերու տունները կողմը երթալով, կը տեսնեն որ քրդեր հաւաքած են 200-էն աւելի պատերազմիկներ և կը պատրաստուին արշաւանք գործել Կելիէկլենմանի վրայ։ Մերինները դիրքեր բռնելով՝ կռիւ կը պատրաստուին։ Հոգ կ'ըլլան Մուրատ, Կորիւն և Խրօ։ Ներկայ եղող շէնքերցիներ և սեմալցիներ ալ օգնութեան կը վազեն իրենց գլխաւորներով։ Շուտով հաւար կը ձգեն նաև գիւղերը։ Դեռ աղօթարան չբացուած՝ կռիւը կըսկսի։ Մերինները առիւծի պէս առաջ կը նետուին։ Մոկունքցի Խրօն, հակառակ իրեն եղած ազդարարութեանց, արհամարելով ամէն վտանգ, կը նետուի քրդերու վրայ՝ „միթէ՞ քրդի գնդակն ալ Ֆէդայի կրնայ զարնել" ըսելով։ Քարի մը ետև պահուած քիւրդեր կը զարնեն քամակէն և մեր ԽՍՐՕՆ կըսպանուի։ Ընկերոջ այս կորուստի առջև մերինները կը կատղին և նոր օգնութիւն ալ հասնելով Շէնքքէն, Սեմալէն, Ալիանքէն՝ ամէն կողմէ կը պաշարեն քրդերը։ Մաս մը կը փախչին, մաս մըն ալ կը փակուի տուներու մէջ։

Հոս անկարագրելի քաջութիւն, յանդգնութիւն և կորով կը ցուցնեն թէ Մուրատն ու զինուորներ և թէ Հայ ժողովուրդը։ Տուներ փակուած քրդերէն մաս մը կը յաջողին փախչիլ և մաս մըն ալ կը ջարդուին, կըսպաննուին։ Կռիւը կը տևէ մինչև կէսօր և կը վերջանայ քրդերու փախուստով։ Սասունցիք կ'ուզեն հետապնդել և իրենց 10 տարի առաջ տուած զոհերու վրէժը լուծել, բայց Մուրատը կարգիլէ, այդ օրուայ համար բաւական սեպելով այդքանը։

Ահա այս է երէկուայ մեր անդրանիկ կռիւը։ Մեզմէ սպաննուած է Մոկունքցի ԽՍՐՕՆ և 2 շէնքքցի ալ վիրաւորուած են. իսկ քրդերէն սպաննուած են աւելի քան 25 մարդ և շատերու զէնքերն ալ գրաւուած են։

ՎԱՀԱՆ

ՇԷՆՔՔ-ՍԷՄԱԼԻ ԿՌԻՒՆԵՐԸ

(Ապրիլ 11-13)

Սասուն, 14 ապրիլ

Սասուն բռնկած է։ Կռիւը կը շարունակի մեր և կառավարութեան ու քիւրդերու միջև։ Նախորդ նամակներով կրցածիս չափ երկար գրած եմ մարտի 30 ի կռիւի մասին։ Այդ դէպքէն շաբաթ մը յետոյ՝ լսելով, որ շորս կողմէն զօրք և աշիրաթ պիտի գայ, հայերը Շէնքքը վառեցին, թշնամու ձեռքը չըտալու համար։

Կուսակալը՝ իր հետ ունենալով քանի մը հազար զինուոր և Բաղէշի, Մուշի առաջնորդներն ու Մուշի գլխաւորները, հոս եկեր է։

Ապրիլ 11-ին անհամար քիւրդեր և թիւրք ձիաւոր ասիկաններ ու զինուորներ կը պատրաստուէին յարձակուիլ Սեմալի վրայ։ Կուգան մինչև Շէնիկի աւերակները։

Ասոնց պատրաստութիւնը տեսնելով՝ մեր տղայք և ժողովուրդը, Հրայրի առաջնորդութեան տակ, կը յարձակին քրդերու և զօրքին վրայ, զանոնք կը քշեն, կը տանին մինչև մարտ 30-ի կռիւի տեղը։ Զօրքերը դէպի դաշտ կը փախչին, իսկ քրդերը՝ Շէն։ Այս երկրորդ կռիւի մէջ մեզմէ սպաննուեցաւ ալիանցի ՏՕՆՕՒ ՀԵՐՕ անունով ազնիւ երիտասարդը, իսկ թշնամին աւելց 10-ից աւելի սպաննուած և շատ մը վիրաւորներ։

Ապրիլ 12-ի երեկոյեան, կուսակալը Սէմալ գիւղից, իբր պատգամաւոր, ս. Յովհաննու վանքի Առաքել վարդապետը, որը իր հետ կը բերէր պատրիարքի նամակը, Մշոյ և Բաղէշի առաջնորդներու և Մշոյ երևելիներու դիրքերը։ Պատասխանելու համար յաջորդ առաւօտը ինքս գնացի Գեղաշէն, ուր պիտի տեղի ունենար համախմբումը։ Այնտեղ հասայ ապրիլ 13-ի ժամը 1-ին եւ երբ կըսպասէի Հրայրի գալուն, յանկարծ կռիւի ձայներ հասան։ Իրեցաւ, որ կուսակալի բանակցութեան խնդիրը կեղծ է եղեր, զմեզ իրարու վրայ հաւաքելով և ապահով համարելով՝ կ'ուզէ եղեր մեկ հարուածով ամէն ինչ վերջացնել

Առաւօտեան ժամը 1-ին, զօրքերը և աշիրէթը կը յառաջանան դէպի Շէնքը և անկէ ալ Սէմալ։ Հրայրը իր խմբով կը գտնուէր Սէմալ։ Նա կը նշմարէ անոնց յարձակողական դիրքը և անմիջապէս կրակի կուտայ Դաշտակն ու Սէմալը, թշնամու ձեռքից ազատելու համար, և ժողովուրդը կ'ելլէ դէպի սար։ Մերինները սպասելով, որ ժողովուրդը գայ, կ'ուշանան վերի դիրքերը բռնելու. Սէմալի հրդեհն ալ կ'արգելէ զերինք թշնամու շարժումները տեսնելու։ Թշնամին թնդանօթի 15 հարուած կը պարպէ Սէմալի վրայ և շորս կողմէն կը խուժէ.

Մերինները տեղի կուտան և կը նահանջեն մինչև Զայ կսպանուի մեր թանկագին ընկեր ՀՐԱՅՐ և զինուոր ՄԱՏՕՆ (ախլցխացի), սեմալցի ԿՐՊՕՆ և ուրիշ քանի մը տեղացիներ։

Թշնամին կը յառաջանայ Կէլիէկուզանի վրայ. հոն օգնութեան կը հասնին հայ կուսակները և վերէն կը յարձակուին զօրքի վրայ. ասոնք կը թողնեն և փախուստ կուտան կուելով։ Մերինները բաւական տեղ կը մղեն զանոնք։ Սեպուհ և ուրիշ քանի մը ընկերներ վիրաւորուած են, իսկ թշնամու կողմէն 100-ից աւելի զոհ կայ և բազմաթիւ վիրաւորներ։ Մերոնք վերցրին թշնամուց 17 հատ մաւզէր։

Այսօր նոր զօրքեր եկան Մուշէն. վաղը թերևս նոր կռիւ ունենանք։ Եթէ յաղթուինք և Սասուն ոչնչանայ, թող ուրիշներ լուծեն մեր վրէժը...

Սասուն, 14 ապրիլ

(Ուրիշ ծանապարհով)

Ապրիլ 11-ին ունեցանք երկրորդ կռիւ մը, որի մէջ դարձեալ յաղթութիւնը մեզ մնաց։

Երէկ, ապրիլ 13-ին, ունեցանք երրորդ հաւաք կռիւը Սէմալում, որի մէջ կրկին մենք տարանք յաղթութիւնը, բայց անդարմանելի կորուստներ տուինք, — ՀՐԱՅՐ (Դժոխք-Արմենակ), զինուոր ՄԱՏՕՆ (ախլցխացի) սպաննուած են, նոյնպէս սեմալցի ԿՐՊՕՆ և այլ 4-5 հոգի ժողովրդից. թշնամին տուժեց աւելի. 100-ից աւելի զոհ աւաւ և բազմաթիւ վիրաւորներ։ Այսօր նոր զօրք եկան Մուշէն. վաղը թերևս աւելի մեծ ճակատամարտ ունենանք. եթէ ոչնչանանք, անշուշտ կը շարունակէք մեր գործը...

ՎԱՀԱՆ

ԿԷԼԻԻ ԿՈՒԻՒ

(Ապրիլ 20-22)

—

Մուշ, 25 ապրիլ

Սասնոյ յեղափոխութիւնը մինչև ապրիլի 20 ահեղ ճակատամարտներու մէջ յաջողութեան դրօշներ կը ծածանեցնէր։ Թշնամին՝ որ մեծաքանակ կանոնաւոր զօրքերէ զատ՝ շրջս կողմերէն քիւրդ աշիրէթներ հաւաքած ունէր ի Սասուն, տղոց յաջողութիւններէն վհատելով, հետզհետէ Մուշ հասած զօրաց վաշտերն, տեղացի խրամատեան ընդհանրութիւնը և վերստին Ֆիտարպէքիրէն սկսեալ մինչև Խարբերդի, Վանի և Բաղէշի սահմաններ գտնուող քիւրդ աշիրէթներն ալ, զորոնք հրաւիրած էր կոնիաւ, յաջորդաբար լեռ բարձրացուց։

Առնց գումարումէն վերջ, ներկայիս 20-ին, երեքշաբթի օր, առաւօտեան ժամը 8-ին, թշնամին նախապէս 2-300 անգամ թնդանօթներ կ՚արձակէ յեղափոխականաց Կէլիէկուզան գիւղի գլուխը գտնուող դիրքերուն վրայ և ապա թնդանօթի ահեղ որոտումներու տակէն՝ կ՚սկսին հրացանաձգութիւն զօրքը, քիւրդը, աշիրէթը, որոնց ամենուն ձեռքն ալ կառավարութեան կողմէ կանոնաւոր զէնքեր դրած կը լլլայ Բաղէշի վալին։

Մեր կարիճները թշնամուն այս անօրինակ և բազմաթիւ արշաւանքին և միւս կողմէ թնդանօթներու գոռ ու գոչումին հանդէպ, առանց վհատութեան, պաղարիւնութեամբ, կը շարունակեն կռիւը, պատասխանելով դժոխային բանակի թնդանօթներուն ու հրացաններուն իրենց գնդակներով միայն՝ և կը յաջողին մեծ կորուստ պատճառել այդ գազան ամբոխին ու հերոսաբար պաշտպանել Կէլիէկուզանը։

Ապրիլի 20-ի օրը մերինները նորէն յաղթութեամբ կելլեն կուէն։ Պատերազմը սակայն չդադրիր և կը շարունակուի գրեթէ գիշեր ու ցորեկ երկու օրամբողջ։ Բայց որովհետև թշնամին բանակը սև գետի վրայ և մերինները ձեան վրայ կը լինի, ցուրտն ու յոգնութիւնը վերջապէս կը յաղթեն մեր հերոսներուն, որոնք պարտաւորուած կը թողուն իրենց դիրքերն ու կը քաշուին Կէլիէկուզանէն, ուր արդէն կանխաւ հաւաքուած էին 30-է աւելի գիւղերու բնակչութիւնը։

Թշնամին՝ յեղափոխականաց այս նահանջումէն քաջալերուած՝ ալ կանգ չառներ, թնդանօթներ կ՚սկսի որոտալ Կէլիէի մէջ ապաստանած հաղարներով կին և երեխաներու վրայ ու միաժամանակ բանակը քալեցնել կուտայ ի Կէլի։ Թէև հոդ ալ շատ կորուստ կ՚ունենայ, բայց վերջապէս Կէլի կը գրաւի և ժողովուրդի այն մասը, որ չէր կրցեր միանալ մերիններուն, թշնամուն ձեռքը կ՚իյնայ։

Մանրամասները կը պակսին։

Մեր կարիճները նահանջելով ապաստանեցին լեռանց գագաթները, որոնցմէ մինչև պահուս լուր չառինք, որովհետև հաղորդակցութիւններէ կտրուած ենք։ Ալքսնոյ և Դաշտին ամբողջ լեռներ ու ձորեր զօրքերով ու քիւրդերով լեցուն են։

Այս բոլոր սոսկալի ընդհարումները եղան, մինչև 20-23 ապրիլի։ 23-ին և 24-ին 2-300 կանայք մերկ, բոկոտն և կիսամահ բերուեցան այստեղ, կառավարութեան դուռ, զորոնք տան մը մէջ իրարու վրայ լեցուցած են անօթի, խիստ հսկողութեան ներքև և յարաբերութիւններէ զուրկ։

Ապրիլ 22-ին, երբ Կէլիի գրաւումը տեղի պիտի ունենար և գազանութիւնները պիտի վերսկսէին, վաղին իր մօտ հսկողութեան ներքև գրած առաջնորդներ, վարդապետներն ու երևելիները (ժողովականք) բանտարկելով՝ հրաշագործութիւն կը պահանջէ քէֆը ուզածին պէս պատրաստելով զայն։ Թէև ոչ աջոյն առթիւ կը մերժեն, վերջապէս սպառնալիքի տակ՝ բռնի ստորագրութիւն կառնէ և ապա Մուշ կ՚իջեցնէ զանոնք։

Ամսոյս 27-ին դաշտի Բերդակ գիւղին մէջն ալ ընդհարում տեղի ունեցաւ զօրաց և յեղափոխական խմբի մը մէջ։ Մերինները յաջող դուրս կուգան սպաննելով քանի մը զինուոր և գրաւելով քանի մը հրացան։ Զօրքը կը լուծէ իրմվրէժը բերդակցիներէ՝ սպաննելով անոնցմէ 12 կին և մարդ։ Միւս գիւղացիք կը փախչին աստանդ։ Գիւղը կողոպտուելէ վերջ՝ կրակի կը տրուի զօրաց կողմէ։

Քատե՛ր, որ քաջ ձեզ սոսկ անդէն ժողովուրդի գլխայ։

ՄՈՒՇԻ ԿՕՄԻՏԷ

—

ԴԻՄՈՒՄՆԵՐ

Արձագանք տալով Սասունէն եկած ծանր լուրերին, „Դրօշակի“ խմբագրութիւնը ուղղեց ֆրանսիական, անգլիական, իտալական և աւստրիական արտաքին գործերի մինիստրութիւններին մի մանրամասն տեղեկագիր-հեռագիր, խնդրելով անմիջական միջամտութիւն՝ սանձահարելու օսմանեան կառավարութեան վայրագ գործողութիւնները, որոնք կասկած չկայ, թելադրուած են Պոլսոյ, սուլթանի պալատէն։ Մենք չենք խնդրում՝ խնայել յեղափոխականներին, այլ պահանջում՝ ենք անմասն ժողովրդէն չառնել յեղափոխական տարրի վրէժը։

Միաժամանակ „Դաշնակցութեան“ անունէն՝ Արևմտեան Բիւրօն դիմումներ արեց Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ակնառու քաղաքական գործիչներին, ինչպէս և ազդեցիկ լրագիրների խմբագրութիւններին՝ խնդրելով յուզել հայկական հարցը մամուլի և պարլամենտների մէջ։

—

Պարիզեց, ֆրանսիացի մեր բարեկամները, որոնք լաւ ծանօթ են կառավարական տրամադրութիւններին, մեզ տեղեկացնում՝ են, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը գործնական քայլեր է անում Սասունի և Ցաղրոնի հայերին հովանաւորելու համար։ Այդ նպատակով պ. Դելկասէ բանակցութեան մէջ է արդէն անգլիական և ռուսաց արտաքին գործերի մինիստրների հետ, և իբր արդիւնք այդ բանակցութեան՝ կարգադրուած է, որ երեք պետութիւնների հիւպատոսները շտապեն դէպի Մուշ՝ հարկաւոր միջոցները ձեռք առնելու համար։ Ցաղրոնից մեր ընկերները հաղորդում են, որ „երբ լուր տարածուեց, թէ եւրոպական հիւպատոսները գալիս են, ժողովուրդը սրտապնդուեց, իսկ թիւրք պաշտօնեաները սկսեցին աւելի զգոյշ և չափաւոր լինել“։

—

Ցայտնի հոսքերներ Սանֆէնան և Ջէյմս Բրայս մայիսի 20-ին անգլիական պարլամենտի մէջ հարցապնդում՝ արին Հայաստանում կատարուող արիշնոտ անցքերի մա-

սին։ Արտաքին գործերի մինիստրութեան կողմից՝ կոմս Պերսի յայտարարեց՝ որ անգլիական կառավարութիւնը խորհրդակցութեան մէջ է Ֆրանսիայի ու Ռուսաստանի հետ և յոյս ունի այնպէս կարգադրել, որ Բրիթլիզի ֆրանսիական և ռուսական հիւպատոսները բրիտանական հիւպատոսի հետ համերաշխ քայլեր անեն՝ մի եղբակցութեան յանգելու համար։

—

Մայիս 28-ին իտալական պարլամենտում պ. Ֆուչինատո, արտաքին գործերի մինիստրութեան կողմից պատասխանելով պ. Ֆրանկասսիի մի հարցումին, յայտարարեց, որ կ. Պոլսի իտալական դեսպանին մի քանի անգամ պատուիրուած է ուղղել Բ. Դրան հարկաւոր յորդորներ, որպէսզի չնորոգուին Հայաստանի ցաւալի անցքերը։

—

Ֆրանսիական պարլամենտի անդամ Ֆրանսիս դը Պրէսանսէ ուղղեց արտաքին գործերի մինիստր պ. Դելկասէին հետևեալ նամակը, մայիս 26-ից.

Պարոն մինիստր եւ սիրելի պաշտօնակից,

Թոյլ տուէք ինձ տեղեկացնել ձեզ այն ծանրակշիռ կարևորութիւն ունեցող հեռագրների մասին, որ ես նոր ստացայ Թիֆլիզից և Բագուից և որոնք ինձ հաղորդում են, շրջանկաս մանրամասնութիւնով, վերսկսումը Սասունի կոտորածների, ներկայ ամսի սկզբին, մի մեծ տարածութեան վրայ։ Շտապում եմ յայտնել ի գիտութիւն ձեր, որ ես պատիւ կ'ունենամ առաջադրելու ձեզ, հնարաւոր եղածին չափ շուտով, մի հարցապնդում, վերաբերմամբ այն միջոցների, որոնց ֆրանսիական դիւանագիտութիւնը պիտի դիմէ՝ վերջ դնելու այս չարագործութիւններին, ձեռք բերելու անձահարու�և թոյլ չը տալու որ կրկնուեն տասն տարի առաջ տեղի ունեցած սոսկալի դէպքերը։ Ես երախտապարտ կը լինեմ, եթէ բարեհաճէք նշանակելու այն օրը, երբ կարող կը լինէք ընդունելու իմ հարցապնդումը։

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ
Պատգամաւոր Ռոնի

—

Յունիսի 29 (Ն. տ.) նախագահութեամբ ջէմս Բրայսի, որին վիճակուած է ներկայումս ուղղութիւն տալ հայասիրական շարժմանը Անգլիայում, տեղի կունենայ Լոնդոնում մի մեծ միտինգ՝ բազմաթիւ անգլիական և ֆրանսիական քաղաքական գործիչների մասնակցութեամբ։ Անգլիացիներից կը մասնակցեն լորդերի պալատի և պարլամենտի շատ անդամներ, նոյնպէս Ռոչեստեր ու Հերֆորդ յայտնի եպիսկոպոսները։ Ֆրանսիացիներից կը լինեն՝ Պրէսանսէ, Դէնի Կոշէն, Ժորէս, Վիկտոր Բերար, աբբա Լեմիր և ուրիշները։

ՍԱՍՈՒՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Միանգամայն ժամանակակից ենք համարում վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ տալ այն լեռնավայրի մասին, որի վրայ ուղղած է ընդհանուրի ուշադրութիւնը, որտեղ այժմ հայ ռազմիկները մղում են ազատութեան կռիւը։

Սասունը, որ Հայաստանի մէջ, մինչև վերջերս, ամենէն քիչ ուսումնասիրուած վայրն է, կը ներկայացնէ լեռների կոյտ մը, սակայն ոչ դուրկ բնակչութենէ։ Եթէ վերցնենք զուտ լեռնային նահանգը, որ կը տարածուի՝ արևելքէն արևմուտք՝ Բաղէշ քաղաքէն մինչև Կէնճ, մօտ 50 ժամուայ ճանապարհ, և Մուշ քաղաքէն դէպի հարաւ, մինչև Տիգրանակերտի դաշտը՝ մօտ 24-30 ժամ,—շատ դժուար պիտի ըլլայ մանրամասնօրէն պատկերացնել։ Ուստի կը վերցնենք այս լեռնաշղթերու կեդրոնական մասը։

Մշոյ դաշտի հարաւային կողմը, ճիշդ Մուշ քաղաքի կռնակը կ'իյնայ այս մասը և Մուշէն կը բաժնուի Կուռդիք լեռնաշղթայով։ Այս լեռնաշղթան անմարդաբնակ է, ի բաց առեալ հիւսիսային երեսը, ուր շինուած են Մշոյ դաշտի գիւղերէն մի քանիսը։ Ամառուայ եղանակին Տիգրանակերտի կողմերէն՝ բագրանցի, զիլանցի, պատրգանցի և սասունցի կոչուած քիւրդ ցեղերը կուգան վրաններին կը հաստատեն այս լեռնաշղթային վրայ։

Ծովասարի շղթան, որ իր թևերովը կը կցուի Կուռդիքին, կը սահմանէ այս միջին մասը—ֆէդայիներու Սասունը—արևելքէն. հարաւէն՝ Տիգրանակերտի դաշտը, արևմուտքէն Կէնճ գաւառը կը կատարեն նոյնը։

Այս տարածութիւնը տեղացիները կը բաժնեն եօթը գաւառակներու, որոնք են՝ 1) Շատախ, 2) Գաւառ կամ Միջին մաս, 3) Ծովասարի փէշերը, 4) Տալորիկ, 5) Բուսանաց գաւառ, 6) Խիանք, 7) Խուլբ։

Շ ա տ ա խ ը ունի 10 գիւղեր, որ կը տարածուին, Կուռդիք լեռնաշղթայի հարաւային փէշերուն վրայ, արևելքէն արևմուտք։ Միջին մասէն կը բաժնուի փոքրիկ լեռներով, Մուշէն 4-5 ժամ դէպի հարաւ։

Գ ա ւ ա ռ կամ Միջին մասը Անտոք լեռան հիւսիս և արևելք երկարող հովիտներու մէջ զետեղուած է։ Չորս գլխաւոր գիւղեր ունի, բազմաթիւ թաղերով։ Գիւղերէն Իշխնձորը՝ կ'իյնայ դէպի հարաւ, Կեփին լեռան ստորոտը։

Անտոք և Կեփին լեռներու դիմացը, դէպի արևելք, Ծովասարի ձորակներուն մէջ զետեղուած են 10 փոքրիկ գիւղեր, որոնք առանձին մի շրջան կը կազմեն, թէև ոչ որոշ անունով, որ Ծ ո վ ա ս ա ր ի փ է շ ե ր ը անուանեցինք վերը։

Տ ա լ ո ր ի կ Շատախէն 7 ժամ հեռի կ'իյնայ և 11 փոքրիկ գիւղերու կամ թաղերու կը բաժնուի, ինքնին ներկայացնելով մի շրջան։ Այս շրջանին մէջ, Փորխ թաղի վերևը, կ'իյնայ պատմական Ֆրոֆրո-քարը, որ սև ու լերկ քարերով անառիկ դիրք մըն է։ Սխտորքար, Կապլոր և Կոբշիկ լեռները կ'իյնան Տալորիկի հիւսիսային կողմը և կուի լաւ դիրքեր ունին։

Բ ո ւ ս ա ն ա ց գաւառը կը տարածուի Տալորիկի հարաւային-արևելքը իր 16 հայ գիւղերովը։

Խ ի ա ն ք ը ունի 10 գիւղեր և կ'իյնայ Տալորիկէն դէպի հարաւ։

Խ ո ւ լ բ ը Անտոք և Կեփին սարերու արևմտեան փէշերէն կըսկսի ու կը տարածուի մինչև Կինճի լեռները. 9 գիւղեր կան այս գաւառակին մէջ։

Անտոք լեռը, ինչպէս նաև Կեփին, կը գտնուի միջին մասի մէջ։ Անտոքը կը բարձրանայ Կէլիէկուլան գիւղի կռնակին, իսկ Կեփինը՝ անկէ 2 ժամ դէպի հարաւ։

Նախ քան գիւղերու ցուցակը տալ, պէտք է ըսել թէ իւրաքանչիւր գիւղն ինքն իր մէջ բաժանուած է գիւղակներու—այսինքն մայր գիւղէն տարիներու ընթացքին մէջ բաժանուեր են տուներ և մէկէն մինչև երկու ժամ հեռաւորութեան վրայ հիմներ են մի նոր գիւղ. սակայն

ինքնին մնացեր են մայր գիւղին հետ կապուած և միշտ նկատուեր են անոր մի մասը այնքան ատեն՝ որքան իրենք իրենցմէ ալ բաժանուողներ չեն տուեր։ Երբ այս բաժանումները այնքան մեծցեր են, որ իրենցմէ բաժնուողներ եղեր են, հետևաբար իրենք իրենց մէջ կազմեր են մի ամբողջութիւն, շուրջերնին ունենալով նոր թաղեր, այն ժամանակ նկատուեր են ինքնուրոյն մի գիւղ և բաժանուեր են մայր գիւղէն։

Ահա ցուցակը Սասնոյ գիւղերուն՝ իրենց բնակիչներով.

Ա. ՇԱՏԱԽ

	Հայ		Քիւրդ
Կէրմա	30	տուն	—
Քօփ	45	„	—
Իրիցանք	10	„	—
Տափրկ	17	„	9
Գեղաշէն	15	„	—
Շուշնամերկ	25	„	—
Սէմալ [1]	65	„	—
Շէնրք	55	„	—
Կէլիէկանըման	15	„	—
Կէլիէմսուր	20	„	3
Գումար	297	„	12

Բ. ԳԱՒԱՌ ԿԱՄ ՄԻՋԻՆ ՄԱՍ

	Հայ		Քիւրդ
Կէլիէկուզան	120	տուն	—
Ալիանք [2]	60	„	—
Աղբի	80	„	—
Իշխնձոր	50	„	—
Գումար	310	„	—

Կէլիէկուզան կը բաժնուի հետեւեալ թաղերու.— Խարձնգոմ, Տաղվրնի, Ղարիպճան, Մխիթար, Մղրէսան, Հասիլներ, Հիւսէյնցիք, Խասոի Մղրէն, Կավրդիկ, Տաճոլներ, Ռաշրքներ, Ամբարներ, Խոշոքներ, Մէրկէր, Հարմոի գոմեր, Փալի գոմեր, Ալօճակ եւ Եկեղեցւոյ թաղ կամ Բուն գիւղ։ Թաղերէն ոմանք բուն գիւղէն մէկ ժամ հեռու կը գտնուին։ Աղբիի բաժանմունքներն են—Աղբի, Խտան, Թիկի եւ Կալառաշ։ Իշխնձոր ունի 4 թաղեր — Կալիք, Նորհան, Խուզրկու արտեր եւ Բուն գիւղը։

Գ. ԾՈՎԱՍԱՐԻ [3] ՓԷՇԵՐ

	Հայ		Քիւրդ
Հեթինք	35	տուն	—
Խոծոծվանք	8	„	10
Արգիկ	10	„	—
Հարկորք	15	„	8
Քրդամանք	15	„	—
Հաւկոնք	6	„	—
Հոսներ	1	„	—
Քարավանք	3	„	—
Խլհովիտ	8	„	—
Քորախու և Արգխու	12	„	—
Գումար	113	„	18

1) Սէմալ կը բաժնուի քանի մը թաղերու՝ իրարմէ քառորդ կամ կէս ժամ հեռաւորութեամբ։

2) Ալիանք կամ Ալիանցիք մինչեւ 1903 թուականի սկիզբները կը համարուէր Կէլիէկուզանի մի թաղը, սակայն վերջերս բաժանուելով, կազմեց առանձին գիւղ, որ ունի 8 թաղ։

3) Ծովասարի փէշերու գիւղեր քրդերու ընդհարումներուն տակաւ չկրնալով, ցիրուցան եղած են, թողնելով այն՝ ինչ որ կը յիշեմ հոս։

Դ. ՏԱԼԻՈՐԻԿ

	Հայ		Քիւրդ
Հլողինք	25	տուն	—
Տալւորիկ	25	„	—
Հագմանք	10	„	—
Դուալինք	15	„	—
Արդվինք	15	„	—
Փորխ	15	„	—
Հոսնուտ	4	„	—
Հարթք	10	„	—
Սպաղանք	25	„	—
Ձորեր	3	„	—
Եղկարտ	12	„	—
Գումար	174	„	—

Ե. ԲՈՒՍԱՆԱՑ ԳԱՒԱՌ

	Հայ		Քիւրդ
Դաժպետրիկ	4	տուն	—
Մարսթօ	10	„	—
Մքթենք	22	„	—
Քաջառինք	15	„	—
Կոռընկէս	7	„	—
Բսանք	9	„	—
Թարուկ	14	„	—
Տալհօր	3	„	—
Փշուտ	5	„	—
Միջգեղ	28	„	—
Խնձորիկ	23	„	—
Ջրթնիք	18	„	—
Պէլօէնք	6	„	—
Մզրէ և Կրէձոր	12	„	—
Գոմք	18	„	—
Թաթունք	6	„	—
Գումար	200	„	—

Զ. ԽԻԱՆՔ

	Հայ		Քիւրդ
Պերմ	80	տուն	—
Արխոնդ	20	„	—
Պահամտա	20	„	15
Արսրք	15	„	10
Փառկա	40	„	—
Սազտուն	30	„	—
Հեղին	15	„	—
Արտկունք	30	„	—
Ընկուզնակ	40	„	—
Սէվիթ	30	„	—
Գումար	320	„	—

Է. ԽՈՒԼԹ

	Հայ		Քիւրդ
Գեղերվանք	80	տուն	—
Ահարոնք	60	„	—
Շուղէգ	15	„	10
Կասգէ	50	„	50
Փասուր	40	„	40
Էհուք	30	„	—
Ընձքար	80	„	—
Գումար	355	„	100

Ինչպէս կը տեսնուի վերի ցուցակէն, Սասնոյ հայաբնակ մասը կը բաղկանայ 1769 հայ և 155 քիւրդ ընտանիքներէ։ Թէև հայ շրջանները քիչ բացառութեամբ անխառն են քիւրդերէ, սակայն կերած ունին անոնց դրացութենէն։ Քրդերը կը բնակին Խուլբի, Խիանքի և Բուսանաց գաւառի շրջակայքը։

ՀԱՅ ՂԱՐԻՊԻՆ

Ձերդիք չէ՞ ախպէր, տուն տեղ թողած՝
Ճիժ ու պիժդ հասրաթով մնայ,
Քու հէր ու մէրը, հալւոր ընկած՝
Ա՜խ-վա՜խ քաշեն — երբ թօրոն իգայ։

Հար ե՞րբ մնաս, երկիրլ խաղաղի,
Տաճիկ անօրէն չ՚անի թալան,
Քիւրդ համիդիէն որ հանդարտի,
Մըր տուն ու տեղ էլ չ՚անի վերան։

Արի, իմ ախպէր, ֆայդահ չկայ,
Մըր սար ու քարն արիւն կտրեր.
Արի, ախպէր, քո թըվընքն առ,
Դու քու ձեռքով ազատութիւն բեր։

Դէհ, արի, ախպէր, արի՛ սիրտ առ
Մըր պահապան կտրիճ ֆէդահուց,
Արի, ախպէ՛ր, սուր թուրը վեր առ,
Քե օգնութիւն թող գայ զինուց։

Մըր ջան ֆէդան, տեսնե՞ս ինչպէս,
Գոտիկը կապած պատռոն, խէնչալ,
Ձեռքը թըվընք, բոց կրակին պէս
Տաճկին, քրդին որ կիտայ զարար։

Մըր սար ու քարն, դաշտ ու դուրան
Էնդուլ տներուն դուրբան կիգայ.
Ձիւն ու բուքն, անձրևն ու բորան
Ասլան ֆեդայուն եղսիր կիգայ։

Է՛լ արի, ախպէր, մեռնենք մըկտեղ
Մըր տուն ու տեղը, անուշ վաթան.
Դէ՛հ, արի՛, ախպէր, կուենք մըկտեղ,
Մընք կ՚ազատենք մըր Հայաստան։

ՄՀԵՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՀԱՍԱՆ-ԳԱԼԷ, 13 ապրիլ

Գարունը բացուեց, ձիւները հալեցան, երկիրը սկսեց պէսպէս ծաղիկներ ու խոտեր բուսցնել, և գարնան հետ միասին կառավարութեան, քիւրդ ու թիւրք հասարակութեանց սրտերնուն մէջ հայ տարրը ճնշելու, հարստահարելու և կողոպտելու գաղափարը կ՚ածի։

Արդէն ամբողջ տարուան ընթացքին մէջ կեղեքիչ, անողորմ հարկահաւաքները անպակաս են հայ գիւղերէն։ Հիմա աւելի շատ և խիտ կերպով կ՚երթևեկեն. մարդկային՝ զինուորական, ոչխարի և կալւածոց տուրքերէն զատ՝ եզներէն, կովերէն, գոմէշներէն, ձիերէն և էշերէն ալ իւրաքանչիւրին տասնական ղուրուշ տուրք կը պահանջի։ Տարիներէ ի վեր արկածեալ և անկարող՝ ժողովուրդը իր ունեցած չունեցածը ծախէ՝ դեռ մաս մ՚ալ տալիք կը մնայ աւազակապետի սնդուկին։

Հարկահաւաքները ընդհանուր ժողովուրդը իրենց պարտատէր ըրած են, տարիներէ իվեր ապօրինի տոկոսներով և ծախսապահանջներով. 1 ոսկիի տարեական տոկոսը՝ 5 ղրշ. ու մէկ գլուխ շաքար. և մէկ ոչխարի գառին՝ գարունը 10 ղրշ. կուժան՝ աշնան պահանջելու պայմանաւ։ Ցանքէն եկած արդիւնքը կը հարկադրի տալ անխղճին և ընտանիքը կրկին անօթի, մերկ և կարօտ թողուլ։ Անգութ վաշխառուներու առնելիք պահանջելու ձևը բոլորովին անտանելի է. կը հաւաքեն մի քանի ընկերներ, ձիաւորուելով կերթան կ՚իջնեն պարտատէրերու մէկուն, ըսելով՝ „շուտ մեր իրաւունքը բեր, որ ձիերը դուրս քաշենք"։ Տան էրիկ մարդիկը էարուխները ոտքերնին ամրացնելով, մէկը եզը կը ձգէ առաջը քաղաք տանել ծախելու, միւսը կ՚իյնայ գիւղէ գիւղ պակասորդը լրացնելու համար փոխառութիւններ ընելու ելլն։ Տանը մէջ կը մնայ անտէր և անպաշտպան ընտանիքը՝ ծառայելու անգութներու հրամաններուն...

Հայ գիւղերը աշնանէ իվեր արդէն դրած էին իրենց թէ պաշտպան ոստիկաններ. իրօք հայերի ընթացքը հսկելու և իրենց քսակները լեցնելու համար էր դա. գիշերն իսկ գիւղերու ներսը և դուրսը կը շրջագայեն, մանրամասն քննութիւններ կը կատարեն, մինչև իսկ երբ գիւղէ գիւղ խեղճ ու աղքատիկ երկրագործը իր պէտք քերը հոգալու համար կը հարկադրի երթալ։ ԱղորբաՀայը իր ձեռքը գիւղապետէն կնքած վկայագիր պիտի ունենայ կամ աւելի ճիշդ՝ քէհյայի կամ իմամ մուխթարի կնիքով վկայած թուղթ, թէ ինչո՞ւ ման կուգայ գիշերը. եթէ ոչ՝ մեծ տուգանքներու ու պատիժներու կ՚ենթարկի։

Օրերս Դալիբաբա գիւղէն ձերբակալուեցան երկու պատանիներ, 12 տարեկան, մեղադրուելով որ դաշտը իբր թէ հայկական երգեր երգած ըլլան։ Զինուորները կը բռնեն, կը խուզարկեն և կը դրկեն Հասան-Գալէի բանտ։

ՎԱՆ, 27 մարտ

Դրութիւններս շատ աննախանձելի է. կառավարութիւնը մեր էֆէնտիների գործակցութեամբ, ամէն հնար գործ են դնում կտրելու մեր արմատը։ Խախտուած են բոլոր իրաւունքները և քաղաքը գրուած է պաշարման վիճակի մէջ։ Այս օրերս ականաւոր քաղաքացիներ խառն, պաշտօնական մի ժողով գումարեցին, որի մէջ առաջարկուած էին 7-8 միջոցներ յեղափոխականների դէմ, որոնք և գործադրուում են այժմ ամենաստոր ձևով։ Ոչինչ. մեր համբերութեան բաժակը լցած չէ դեռ...

Բացի փետրուարին գնացած գունդից, մարտի 6-ին, 8-ին և 13-ին գնացին Նորից երկուսական գունդ զօրք (թաբուր—գունդ—450-480 հոգի)։ Այս օրերս դարձեալ գնալու է 4-5 գունդ։ Մի քանի գունդեր գնում են Սասունի հակառակ կողմեր, իսկ միւսները՝ ուղիղ դէպի Մուշի դաշտը։ Մի քանի աշիրէթների համիդիականներին ևս հրամայուած է սլանալ այն կողմ. բայց կարծեմ դեռ հայտարանցոց մի ցեղն է գնացել։

Ժողովրդի մէջ, ինչպէս և պաշտօնեաներ ու տաճիկներ, այստեղ և գաւառներում, խօսում են, որ ապրիլի 15-ին պիտի սկսի յարձակում Սասունի վրայ, կոտորած անելու բոլոր գիւղերում և լեռներում։ Խիզնա Մուսա պէյ շէխի մօտ 15-20 օր առաջ մի ժողով է գումարել,

ներկայ է եղել ցայտնի արիւնարբու Սայիդ Ալի. թէ ինչ է եղել ժողովի նիւթը — մեզ որոշ ցայտնի չէ։ Այնտեղից գրում են, որ կառավարութիւնը գինում է բոլոր քրդերին և հրամայած է կոտորել բոլոր լեռնականներին Շատախից մինչև Խազէն և յարձակուել դաշտերի վրայ։

—

ՄԱՅՆ 5 մարտ

Քաղաքի ապահովութեան ու պահպանութեան համար նշանակուած քոմիսէրներուն ամբաստանեցին, թէ հայերից գաղտնի ամսականներ կ'առնեն և քրիստոնէից չերմ պաշտպան կը հանդիսանան։ Այս տեսակ միջոցներով յաջողեցան մարդոց իրենց պաշտօններից հեռացնել։ Քոմիսէրները Բաղէշ տարուեցան դատուելու համար։ Երբև իրենց յաջորդ՝ առայժմ եկան երկու բաղէշցիներ։ Դատուելու համար Բաղէշ տարուած քոմիսէրներէն մինը մանազկերտցի Աւետիս վարժապետն է, որ կրօնափոխ ըլլալուն՝ Մահմատ էֆէնտի կը կոչուէր։

—

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 20 մարտ

Այս երկիրը, ուր մի ամիս առաջ բուռն փոթորիկ կըսպպչուէր և կառավարութիւնը կ'ուզէր ամէնակտրուկ ձևով միանգամընդմիշտ արմատախիլ անել յեղափոխականներին, այսօր մի զարմանալի կերպարանափոխութեան ենթարկուեց։—Խուզարկութիւնները, բանտարկութիւնները, խըստութիւնները դադարեցին, — իհարկէ կարճ ժամանակով, — կասկածելիներին ներում է շնորհուում, բարձրից հեռագիր է ստացուել. „չդպչել ոչ մի քրիստոնեայի մազն անգամ"։

Մի ամիս առաջ Էրզրումից, Երզնկայից, Բաղդատից և այստեղից գունդ-գունդ զօրքեր էին գնում Սասունի պաշարումը խստացնելու, և այսօր-վաղայ յարձակման լուրին էինք սպասում ամէն օր։ Այժմ այդ լուրերը դադարեցին։ Այժմ լուր է պտտում, որ Կ. Պոլսոյ պատրիարքը (՞) գալու է Սասուն յեղափոխականներին հաշտեցնելու... մի շշուկ, որ ցոյց է տալիս, թէ ինչ տեսակ խաբուսիկ լուրերի շտեմարան է դարձել երկիրը...

Օրերս էլ լուր է տարածուել, իբր թէ հեռագիր է եկել Սասունի պաշարումը վերացնելու (?)։ Քաղաքումս զօրք չի մնացել (հազիւ 500-800, մինչդեռ առաջ 3,000-3,500). փոքր մասը գնացել է դէպի Բայազէդ, մեծագոյն մասը Սասուն...

Գիտէք, ինչպէս են բացատրում այդ բոլորը կառավարական շրջաններում. „Անգլիան, ասում են նրանք, երկիւղ կրելով ռուսական միջամտութիւնից, հրահանգել է Թիւրքիային՝ տեղի չտալ առայժմ ոչ մի աղմուկի և խռովութեան"...

Տաճիկ կառավարութեան այժմեան խաղաղ ու լուռ գործունէութեան մէջ վտանգաւոր դիտումն կայ. իր նենրողամտութեամբ ու խաղաղ ընթացքով նա ուզում է անշուշտ յանկարծակիի բերել ժողովուրդը՝ անպատրաստ պահել, միամտացնել ու այդպիսով մի հարուածով վերջ տալ հայկական շարժման։ Վա՜յ նրանց, ով կը խաբուի...

—

ԲԱՍԵՆ, 12 ապրիլ

Կառավարութիւնը նորերս յայտարարել է Բասենի բոլոր հայ և քիւրդ գիւղացիներին, որ „եթէ ջան-ֆէդայիներ երևան գան ձեր մէջ, դուք նրանց հետ կուելու իրաւունք չունիք և ոչ էլ ընդհանուր հաւար տալու, այլ միայն պէտք է իմաց տաք զօրքի հրամանատարին։ Թողէք, որ զօրքը նրանց զսպէ"։ Բերանացի յայտարարութիւնները այսպէս են, իսկ գաղտնի հրամաններ ու բանակցութիւնները՞ քրդերի հետ...

Յայտարարուած է բոլոր հայ գիւղացիներին, որ առանց գիւղի ոստիկանի թոյլտուութեան իրաւունք չունենան գնալ մօտակայ գիւղը և որ գնալու և վերադառնալու դէպքում՝ պարտաւոր են ներկայանալ ոստիկանին։

—

ԿԱՐԻՆ, 6 ապրիլ

Նորից մէկ թափուր զօրք Ճանապարհ ընկաւ դէպի Մուշ։ Այս ամսին ընդամէնը Կարինից գնացել են 3 թափուր զօրք, մի թափուր զօրք էլ 2 օր է ինչ բքարգել եղած են Սև-սարում և չեն կարողանում առաջ գնալ։ Հրաման է ստացուած, որ դարձեալ 1,600 զինուոր ուղարկի դէպի Սասուն։

—

ՏԱՐՕՆ. 26 փետրուար

Հայ հասարակութեան այժմեան աղիողորմ ու կեղեքիալ վիճակը կը շարունակի, — պանդուխտներու վերադարձին արգելումը, հայոց կալուածներու գրաւումը, հարկահաններու եռապատիկ գանձումները, կանանց և տղայոց դէմ իգործ դրուած խոշտանքումները, միլիթէզիմներու յափշտակութիւնները, դատարանի փակողմանի վճիռները, հին ու նոր չարիքներու նորագոյն կազմակերպութեան ներքին մշակումը ևն ևն։

Հայ յեղափոխականները կը պատրաստուին ինքնապաշտպանութեան։ Իսլամներու սպառազէն ու սպառնալից վիճակը, որ կայծի մը կըսպասէ պայթելու, ահարկու խթան մը եղած է հայ ժողովրդին ալ՝ իր գլխուն ճարը նայելու և ինքնապաշտպանութեան միջոցներ ստեղծելու։ Դէպի այս կէտ լարուած են մտքերը թէ Սասնոյ և թէ մանաւանդ Մշոյ դաշտի և յարակից կարգ մը գաւառներու մէջ։ Ինքնապաշտպանութեան այս գաղափարը, որ ծագում առած է իսլամներու սպառազինութիւններէն, վերջիններու ազդած սարսափին համեմատութեամբ՝ ահագին ծաւալ գտած է հայ ժողովրդին մէջ, քաղաքը, գիւղերը, ամէն կողմ, ամէն դասակարգի և ամէն հասակի տղամարդոց մէջ։ Ինքնապաշտպանութեան կարևոր գործին համար իւրաքանչիւր հայ անհատ իրեն որոշած բեռը կամ պարտքը՝ որքան որ իր կարողութիւնը կը ներէ՝ ընդունած է և շատերը կ'աշխատին ունեցածնին կէս-գնով ծախել, նոյնիսկ հողերը գրաւ դնելով, ձեռք բերել զէնք մը, զոր կը ծախեն չէրքէզներ, քիւրդեր, նոյնիսկ թիւրքեր եռապատիկ և քառապատիկ գնով, չնայելով որ ծախուած զէնքերը յաճախ կեղծ ու չգիմացող բաներ են։ Մինչ մէկ կողմէ հարկահաւաքները տզրուկի նման անոնց արիւնը կը ծծեն, միւս կողմէ եռանդուն կերպով յառաջ կը տարուի ինքնապաշտպանութեան գործը։ Ափսոս, հազար ափսոս միայն, որ զէնք չի գտնուիր. յեղափոխական կազմակերպութիւնը հազիւ իր պէտքերուն կրնայ բաւարարութիւն տալ։

Տեղական կառավարութիւնը իրազեկ եղած է ամէն կերպով և իր խորհրդաւոր լռութեամբ կը հսկէ անցած դարձածին վրայ։ Սակայն հայ ժողովրդին ամէն տեսակ յոյսեր, խրատ ևն՝ այլևս անօգուտ են։ Ցուսահատութիւնը ծայրայեղութեան հասած է. „մեռնելը ապրելէն լաւագոյն կը համարինք", կ'ըսեն։ Կառավարու-

թեան դրդումներու շնորհիւ իսլամ տարրերն ալ այնքան դիւրագրգիռ վիճակի մէջ են, այնքան կազմ ու պատրաստ, որ անդորրութիւնը և հայ ժողովրդի կեանքը թեթև հովէ մը կախուած է։ Արդէն պատեհ ու անպատեհ առթիւ չեն քաշուիր հայերուն սպառնալէ, թէ „ձեր օրերը համրուած են, քիչ ատենէն ձեզ պիտի ջարդենք, կոտորենք“։ Կարևոր դէպքերու նախատօնակին մէջ կը գտնուինք...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

8 մայիս

Ցուզիհ լուրեր. — Սուլթանի վերջին ծրագիրը Սասունի վասին. — Ոստիկանական արկածներ.

Եըլդըզի շրջանակներուն մէջ երևակայական լուրեր կը պտըտեցնեն. „Ռուս կառավարութիւնը վախնալով կովկասեան հայերու շարժումներէն, վերջին ռուսական հարստահարութիւններուն առթիւ, և կասկածելով, որ հայերը կրնան կաթողիկոսութիւնը փոխադրել Թիւրքիա, հայ յեղափոխական խումբեր կազմակերպած է և թոյլ տուած է անոնց Թրքական սահմանագլուխը անցնել ու հոն խռովութիւններ, շփոթութիւններ հաներ“։ Ռուսական կառավարութեան նպատակն է, ըստ Եըլդըզական տրամաբանութեան, Թիւրք կառավարութիւնն ու խուժանը, ինչպէս նաև քիւրդ, չէրքէզ, եզիտ, լէզկի տարրերը հայերուն դէմ գրգռել և հայկական նոր կոտորած մը ստեղծել, որով իրաւունք ունենայ ըսելու Թէ՝ ահաւասիկ Թիւրքերը կը ջարդեն հայերը և այսպիսով միջամտել Թիւրքիայի գործերուն և ստեղծել նոր ուլուրջ բարդութիւններ։

Հարկաւո՞ր է միթէ ըսել որ այս զրոյցը մէջտեղ նետուած է սուլթանին և իր համախոհներուն կողմէ, արդարացնելու համար, ով գիտէ ինչ նոր դժոխային ծրագիրներ նոր կոտորածներու, որոնց մասին ամենահաւաստի աղբիւրներէ ստացուած տեղեկութիւնները շատ քիչ կասկածների տեղիք կը թողնեն։ Սպասենք նորանոր դէպքերու, աւելի պարզ տեսնելու համար մօտիկ ապագան։ Աւելորդ չ՝ըլլայ թերևս հոս յիշել Էրզրումի ռուսական հիւպատոսին խօսքերը նոյն քաղաքի հայ եկեղեցական իշխանութեան ներկայացուցիչներուն ուղղած՝ Բասենի կուին առթիւ. „Հայերը պէտք է հանգիստ կենան առայժմ. միմիայն Ռուսիան է, որ կրնայ հայկական խնդրին փափագելի լուծումը տալ (´´) և որովհետև Ռուսիա հիմա զբաղած է Ծայրագոյն Արևելքի մէջ, չկրնար իհարկէ միջամտել Թիւրքիոյ գործերուն և հայերը պարապ տեղը կը ջարդուին“։

Պէտք կա՞յ բացատրութեան...

Մուշի և Սասունի շրջականները բնակող քիւրդ ցեղապետ մը գրած է Եըլդըզ, Թէ ինք միևնակ կարող է բոլորովին ոչնչացնել հայ տարրը այդ տեղերէն, միայն Թէ իրեն պէտք եղած դրամական և զէնքի օգնութիւններ ըլլան։ Սուլթանը, աւելորդ է ըսել, աւելին չէր ուզեր, իր այնքա՞ն սիրուած նպատակին հասնելու համար։ Նոյն ցեղապետին անմիջապէս կը ղրկուի մեծաքանակ դրամ, զէնք և ռազմամթերք։ Հայերու կեանքը վտանգի մէջ է, գուցէ և կոտորածը մօտալուտ։ Ո՞վ պիտի արգիլէ սուլթանին արիւնռուշտ ծրագիրներուն գործադրութիւնը...

Համիդի սովալլուկ պաշտօնեաները այս օրերս նոր որսեր գտան Պօլսոյ մէջ։ Ահաւասիկ դէպքը.

Երկու շաբաթ առաջ, իրիկուն մը, անծանօթ անձ մը կը դիմէ Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին և կ՝ուզէ ժամակոչին յանձնել նամակ մը, տիկին Աւգերի հասցէին։ Ժամակոչը չ՝ուզեր ընդունել նամակը և կ՝ուզէ կնոջ տունը ցուցնել անծանօթին։ Անծանօթը կ՝ըսէ Թէ ինքը չկրնար գտնել տունը և նամակը կը ձգէ ժամակոչին, ըսելով որ եթէ կ՝ուզէ թող տանի։ Վերջինս ալ կը ստիպուի նամակը տանել հասցէին։ Տիկին Աւգեր նամակի բանալով՝ կը շլարի կը մնայ։ Այդ նամակին մէջ ըսուած էր որ տիկին Աւգերի ծանօթ մէկ տեղը զէնքեր կան պահուած և կը խնդրուէր որ այդ զէնքերը առնելով մօտակայ պարտիզին մէջ ցուցուած տեղը դրուէր, ուրկէ անծանօթները այն զէնքերը պիտի առնէին։ Ստորագրութիւն (յեղափոխական մի ինչ որ կուսակցութեան)։ Տիկին Աւգեր, որ քոյրն է Նորատունկեան էֆէնտիի, պաշտօնեայ բարձրագոյն դրան և ատենապետ Հայոց քաղաքական ժողովին, ուղղակի կը դիմէ եղբօրը։ Նոյն շաբաթը Նորատունկեանին կը պաշարէ և ուղղակի նամակը կը տանի Պէշիկթաշի կառավարիչ Հաճի-Հասան փաշային։ Կըսկսին ձերբակալութիւնները։ Նախ կը տանին եկեղեցիին ժամակոչները՝ և քանի մը հոգի ևս թաղէն։

Այս դէպքը ազատ ասպարէզ կուտայ սովալլուկ Թիւրք պաշտօնեաներու քաջագործութիւններուն, որոնք կըսկըսին նախ իրենց յաւէտ պարապ քսակը լեցնել և յետոյ յագուրդ տալ իրենց անձնական հակառակութիւններուն և վրէժխնդրութիւններուն։ Այս կարգէն է ձերբակալութիւնը վերոյիշեալ Ս. Կարապետ եկեղեցու թաղական խորհրդի անդամներէն՝ Պէզազեան և Նառլեան անուն անձերուն, որոնց դէմ հակառակութիւն ունէր երկար ատենէ իվեր Իւսկիւտարի կառավարչին անձրձակը, ծանօթ սրիկայ մը, որ կարևոր պաշտօն մը ունի նոյն կառավարութեան մէջ։ Պէզազեան և Նառլեան ազատ կ՝արձակուին, սակայն, երկօրեայ բանտարկութենէ ետքը։ Միւս ձերբակալեալները դեռ բանտին մէջ կը քաւեն իրենց չգործած մեղքերը։ Ո՞վ կրնայ ըսել Թէ, այս նամակը գործը չէ սուլթանին չափազանց եռանդուն մէկ ստրուկին, եթէ ոչ նոյն ինքն սուլթանի ներշնչման։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ՔՍԱՆԵՕԹՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 4 ապրիլի 1904

Տասնութ տարի առաջ, 1887-ին, երբ կովկասեան քրիստոնեայ ազգաբնակութիւնը ենթարկուեց զինուորագրութեան, ռուսաց կառավարութիւնը՝ ժողովրդին քնացնելու նպատակով՝ յայտարարեց, որ տեղացի զինուորները, հայ Թէ վրացի, Ռուսաստանի ներքին նահանգները չեն ուղարկուի, այլ առանձին զօրաբանակներ կազմելով, կը տեղաւորուին հայրենի երկրում, Կազբէկի և Արարատի գեղատեսիլ հովիտների մէջ։

Բարձրագոյն խոստումն էր։ Պէտք էր կատարել։ Եվ կատարեցին։ Բայց որքա՞ն տևողական և ի՞նչ չափոն մնայուն եղաւ նա։ Ահա հարցը։ Նա եղաւ նոյնքաւ տևողական և նոյնքան մնայուն, որքան ուրիշ շատ

բարձրագոյն խոստումներ, տրուած գահի բարձրութիւնից։

Հազիւ մի քանի տարի անցած՝ բարձրագոյն խոստումը դրժուեց։ Եւ ի՞նչ կայ այդտեղ ամօթալի կամ ստոր։ „Թագաւորը երդուեց, Թագաւորն էլ դրժում է իր երդումը“,—ահա այն սինիկ խօսքերը, որ արտասանեց մեծ իշխան Միխայէլ՝ ֆինլանդական պատգամաւորութեան առջև, բաղկացած 500 հոգուց, որը Հելսինգֆորսից Պետրոս Մեծի հիմնած քաղաքն էր եկել՝ բողոքելու՝ յանուն ֆինլանդական սահմանադրութեան՝ Նիկոլայ II-ի օգոստափառ ուխտադրժութեան դէմ։ „Թագաւորը խոստացաւ, Թագաւորն էլ յետ է վերցնում իր խոստումը“, ասացին երևի միւս մեծ իշխանները, իբրև պատասխան այն բողոքներին, որ լսւում էին կովկասեան սահմաններից, երբ կառավարութիւնը ոտի տակ տուած անցեալ որոշումը, սկսեց տեղացի զինուորներին, մանաւանդ հայերին, փոքր առ փոքր Կովկասից դուրս տանել և ուղղել դէպի այն հեռու նահանգները, որոնք թէև նոյն պետութեան մէջ, բայց իրենց կլիմայով և պայմաններով ոչ միայն հաճելի չեն հարաւացուն, այլ կատարելապէս կործանիչ՝ թէ առողջութեան և թէ կեցութեան ընդհանուր տեսակէտից։

Ի՞նչ էր պատճառը։ Արդեօք ա՞յն, որ կովկասեցի զինուորը պետական պարտք չունէր կատարելու իր երկրի մէջ, թէ ա՞յն, որ նրա ներկայութիւնը և զէնքը անհրաժեշտ էին ներքին նահանգների անդորրութիւնը ապահովելու համար։ Կամ թէ ա՞յն գուցէ, որ հայրենի երկրի սահմաններում տեղացի զինուորը տուեց անվստահութեան ապացոյցներ, նշան՝ որ նա հաւատարիմ չէ գահին և նրան վստահել չէ կարելի՝ վտանգաւոր բոպէներին։

Եւ ոչ մէկը դրանցից։

Ընդհակառակը։ Նոյնիսկ ամենաողբերգական բոպէներին, արտասուքի այն ծանր վայրկեաններին, երբ հայ զինուորին հրամայում էին հրացան բռնել իր եղբօր, հարևանի, քաղաքացու դէմ, երբ նրան ուղարկում էին զէնքի ուժով փակել տալու հայկական դպրոցները կամ երբ ոստիկանների մշտափակ գիւանատներում սարքած հայկական ապստամբութիւնը զսպելու համար, նոյն հայ զինուորներին տանում էին դէպի հայաբնակ թաղերը կամ կրօնական համախմբումների վայրերը,—ամէն տեղ և ամէն անգամ նրանք ցոյց տուեցին, որ դեռ այնքա՛ն հաւատարիմ են և այնքա՛ն ստորուկ զինուորական կարգապահութեան, որ հեռաւորապէս անգամ չեն մտածում ըմբոստանալ և անհնազանդութեան ճամբան ոտք դնել...

Փաստերը փայլուն էին։ Սակայն ո՞վ է այս դժբախտ երկրում փաստերին ականջ կախում։ Փաստը իր համար, հրամանը իր համար։ Մէկը նոյնքան կապ ունի միւսի հետ, որքան բռնապետութիւնը՝ պրդարութեան հետ։ Շատ առաջ և բոլորովին այլ առիթներով վճռուած է եղել, որ տեղացի զինուորներին իրենց երկրի մէջ պահելը „վստահելի չէ պետական շահերի տեսակէտից“, և ահա հիմնուած այդ անցած վճռի վրայ՝ դրժեցին տուած խոստումը և քշեցին տեղացի զինուորներին այլ նահանգներ...

Կասկածը այդ անգամ էլ յաղթանակ տարաւ։ Եւ այդ այն տարիներին, երբ համարեա գոյութիւն չունէր „հայկական շարժումը“, երբ Արարատի շուրջը դեռ տեղի չէր ունեցել և ոչ մի փաստ, որ գէթ ձևականօրէն արդարացնէր „լուրջ միջոցներին“ դիմելու „պետական“ անհրաժեշտութիւնը։

Բայց ահա երկնակամարը մթնագունեց. հորիզոնի վրայ քաղաքական ամպերի նշաններ նշմարուեցին. տեղ տեղ փայլատակեց յեղափոխական կայծակը, հեռո՛ւն, շատ հեռո՛ւն հրացանի ձայներ լսուեցին, պայթեց նոյնիսկ ռումբ և սարսափահար բռնապետութիւնը հասած հասարեց վճռական ժամը՝ „ամենալուրջ միջոցներ“ ձեռք առնելու։ Շտաբների մէջ ժողովներ եղան. սպաները կանչուեցին գաղտնի խորհրդակցութեան. „նորին գերազանցութիւնները“ հաղորդագրութիւններ պատրաստեցին, մի խօսքով՝ ճահիճը աւեկոծուեց...

Եւ այժմ, նոյնիսկ զինուորը, այդ ամենատգէտ և միաժամանակ ամենավստահելի զանգուածը, որի վրայ ամրացած են գահի ոտքերը, նա, որ իր պինդ մէջքի և աւելի պինդ գլխի վրայ այնքա՞ն բարձր է պահում ճնշման ամենամեծ նշանակը—միապետութիւնը, դարձել է վտանգաւոր, ենթակայ „չարամիտ պրօպագանդի“, հետևաբար արժանի թերահաւատ վերաբերմունքի ու խստագոյն հսկողութեան։

Խեղճ հայ զինուորնե՛ր։

Ձեզանից քիչերը բախտ ունեցան ազատ մնալու տարագիր կեանքից, քիչերը արժանի եղան իրենց հնգամեայ տաժանակիր ծառայութեան ընթացքում վայելելու հայրենի երկրի օդը, ծանօթ ժողովրդի հարևանութիւնը։ Եւ այժմ կամ սրանից յետոյ՝ այդ փոքրաթիւ „բախտաւորները“ և նրանց յաջորդները, ամենայն հաւանականութեամբ պէտք է նոյնպէս հեռանան, գնան այլ երկիրներ, օտար նահանգներ, դէպի այնպիսի տեղեր, ուր հայութեան հետք անգամ չկայ։

Այդ մռայլ, տխուր ապագայի նախանշանը կարող էք համարել հետևեալ գաղտնի շրջաբերականը, որ թէև „գաղտնի“, բայց անցել է գահի անհանգիստ հակառակորդների ձեռքը և ուղարկուում է „ազատ“ տպարան, ուր չի թագաւորում տպարանական տեսուչը, որտեղ անգոր է ամենազօր գրաքննիչի թաթը և որտեղից նա պիտի անցնի լոյս աշխարհ՝ ի գիտութիւն արգելած թերթերի ծարաւ հասարակութեան...

Կարդացէք այդ գաղտնի թուղթը.

Զ. Մ.
ԿՈՎԿԱՍԵԱՆ
ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ՇՏԱԲ
ԳԱՂՏՆԻ ԲԱԺԻՆ

№ 4593

1903, դեկտեմբերի 8
Թիֆլիս

ՊԱՏՃԷՆ

ԴԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ,

Կովկասեան զօրաբանակի

Հրամանատարին

Միջոցներ շրջանի զօրքը ազատ պահելու հայ յեղափոխական պրոպագանդի ազդեցութիւնից.

„Մի քանի տարի սրանից առաջ Կովկասեան երկրի հայ ազգաբնակութեան մէջ սկսեց նկատուել Հայաստանի ինքնուրոյնութեան անիրականալի գաղափարի մի առանձին զարթնում։

„Ծնունդ առան հայ կոմիտէներ, որոնք հրապուրանքով և սպառնալիքներով սկսեցին եռանդագին արծարծել այդ գաղափարը և չարամիտ կերպով ուղղել այն՝ դէպի ատելութիւն Ռուսաստանի դէմ ընդհանրապէս և մասնաւորապէս այն բոլորի դէմ, ինչ որ ռուսական է։

„Կովկասեան շրջանի զօրքերը, որոնց շարքերում ըստ առաջնոյն ազնիւ, հաւատարիմ և անձնուէր կերպով ծառայում էր հայ զինուորը, երկար ժամանակ մնում էին

հայկական պրոպագանդի ազդեցութիւնից դուրս։ Սակայն վերջին ժամանակներս չարաշնաս ինտելիգենտ պրոպագանդիստները եռանդով ուղղում էին իրենց յանցաւոր գործունէութիւնը շրջանի զօրքերի վրայ։ Քահանան, ուսուցիչը և մինչև իսկ պետական պաշտօնեան—բոլորը, ինչպէս երևում է, միանում էին, որպէս զի յաղթահարեն հայ զինուորի մէջ նրա համոզմունքը երդման սրբութեան մասին և թեքեն նրան դէպի յանցաւոր փախուստ ծառայութիւնից ու դէպի գողութիւն՝ զէնքի և հրանիւթ մթերքների։ Թէպէտ և հայ-զինուորների մէջ գտնուեցին այնպիսիներ, որոնք ոչ միայն դիմադրում էին խառնակիչներին, այլև յանձնում էին նրանց իշխանութեանը, այնուամենայնիւ գտնուեցին, դժբախտաբար, և այնպիսիներ, որոնք հետևելով ստայոդ ագիտացիային, հեռանում էին պահակատեղերից տանելով զէնքեր՝ և մինչև իսկ կազմում էին գաղտնի ակումբներ։

„Ընդունելով ծայրագոյն կարևորութիւնը և այժմէութիւնը ամենաեռանդուն կուի ընդդէմ այդ նորածին չարիքի, շրջանի զօրքերի ժամանակաւոր հրամանատարը յանձնարարել է ինձ՝ խնդրել բոլոր զօրաբաժինների աւագ ու կրտսեր գլխաւորներին՝ ուղղել իրենց բոլոր ջանքերը և բոլոր ուշադրութիւնը՝ հեռու պահելու մինչև օրս ազնիւ մնացած ցարի հայ ծառային՝ ամէն տեսակ հրապոյրից, որ կարող է բերել նրան քաղաքական ագիտատօրների չարամիտ պրոպագանդը։

„Սրա հետ միասին նորին Գերազանցութիւն գեներալ լէյտենանտ Ֆրեզէ բարեհաճեց յանձնարարել զօրքերին մի շարք հետևեալ միջոցներ, որոնց ամբողջական գործադրութիւնը կ'ունենայ, անտարակոյս, բարերար հետևանք գործի համար։

„1) Պրոպագանդի դէմ կուելու համար՝ զօրաբաժինների գլխաւորները կարող են օգնութեան կանչել հայ-օֆիցերներին և յանձնարարել նրանց՝ ազդել իրենց հեղինակութեամբ կրօնակից զինուորների վրայ։

„2) Անհրաժեշտ է բոլոր միջոցներով խրախուսել և վարձատրել այն հայ-զինուորներին, որոնք իբրև կատարումն իրենց ծառայական պարտքի և երդման՝ երևան կը բերեն ու կը ներկայացնեն զինուորական վարչութեանը այն գաղտնի գործիչներին, որոնք կը փորձեն խառնակութիւն ձգել զօրքերի մէջ։

„3) Մտերիմ խօսակցութիւնների ճանապարհով հարկաւոր է բացատրել հայ-զինուորներին՝ պրոպագանդիստների գաղափարի էութիւնը և բոլոր յանցաւորութիւնը ու միևնոյն ժամանակ հասկացնել նրանց երդման սրբութիւնը և այն օգնութիւնը, որ եղել է Ռուսաստանի կողմից, որը միայն իր ջանքերով ազատել է հայերին այն ծանր վիճակից, որի մէջ նրանք գտնուում էին Թիւրքիայում ու Պարսկաստանում, և որը, իբրև նրանց հայրենիք, ապահովել է նրանց բարօրութիւնը։

„4) Աշխատել ներգործել նրանց վրայ այնպիսի եղանակով, որ նրանք իրենք իրենց և իրար պաշտպանեն պրոպագանդից և յանցաւոր յափշտակումից, որպէս զի նրանք հսկեն միմեանց վրայ, յիշեցնելով, որ նրանցից մէկի յանցաւորութիւնը կարող է վարկաբեկ անել վարչութեան աչքում նրանց բոլորին։

„5) Ցոյց տալով հայ զինուորներին հնարաւոր վստահութիւն, միաժամանակ նշանակել նրանց վրայ, զօրքի մասերում, ամենախիստ հսկողութիւն, նպատակ դնելով գլխաւորապէս ազատ պահելու նրանց, հէնց իրենց օգտի համար, վնասակար ազդեցութիւններից։

„6) Առանձին զգուշաւորութեամբ թոյլ տալ զօրանոցներում տեսակցութիւն հայ այցելուների հետ։

„7) Զօրաբաժնի գլխաւորը պէտք է իմանայ՝ թէ ո՞րտեղ է լինում և ո՞ւմ է այցելում, արձակուրդի ժամանակ, իր իշխանութեան ենթակայ հայ-զինուորը։

„8) Կրկնապատիկ ջանք գործ դնել, որ բոլոր հայ զինուորները ռուսերէն խօսեն. դրա համար հարկաւոր է պահանջել՝ որ տեղացի զինուորները իրար մէջ ուրիշ լեզուով չխօսեն, բայց եթէ ռուսերէն։

„9) Տեղացի զինուորներին, ինչպէս զօրաշարքերում, նոյնպէս և քնելիս, տախտակամածների կամ մահճակալների վրայ, մասերի բաժանել և խառնել ռուսների հետ, թոյլ չտալով, որ միանան և առանձնացած խմբեր կազմեն։

„10) Առանձնապէս աչալուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել այն հայ զինուորների վրայ, որոնք ապրում են զօրագնդային առանձին կացարաններում, ինչպէս են՝ հացագործները, արհեստաւորները, գրագէտները և զօրագնդի տնտեսական կազմի այլ անձինք։

„11) Հարկաւոր է ուշադրութեամբ հետևել, որպէս զի, համաձայն ներքին ծառայութեան կանոնագրութեան § 47-ի, զօրանոցների մէջ, զինուորների շրջանում, գործածուեն միայն այն գրքերը և տպագրական հրատարակութիւնները, որոնք վաւերացուած են զօրաբաժնի գլխաւորի ստորագրութեամբ։

„12) Երբ կասկած ծագի, որ զօրանոցների մէջ մուտք են գտել վնասակար բրոշիւրներ ու կոչեր, չպէտք է վարանել մանրամասնօրէն խուզարկել զինուորների բոլոր իրեղէնները։

„13) Ըստ կարելոյն աւելի զգաստ կերպով վերաբերուել զօրաշարքերից դուրս եղող տարրերին, որոնք կարող են վնասակար կերպով ազդել հայ-զինուորների վրայ, ուշադրութիւն դարձնելով դրա հետ միասին հայ քահանաների, ուսուցիչների և տեղական ինտելիգենցիային պատկանող անձանց վրայ, որոնք այս կամ այն յարաբերութիւնն ունին հայ-զինուորների հետ։

„14) Այն մասնաւոր մարդոց վերահսկողութեան գործում, որոնք կարող են վնասակար ազդեցութիւն ունենալ զօրախմբերի մէջ, զօրաբաժինների հրամանատարները պէտք է համաձայնութիւն կայացնեն տեղական ադմինիստրացիայի և ոստիկանութեան հետ, որպէս զի նրանց միջոցով՝ ըստ կարելոյն լաւատեղեակ լինեն պրոպագանդիստների վերաբերմամբ և կամ կարող լինեն նրանց աչկոնութեամբ մօտիկից հսկել այն հայ տների վրայ, ուր յաճախակի գնալ-գալ ունեն հայ-զինուորները։

„15) Եկեղեցի, որի ընտրութիւնը անում է գնդապետը և ուր ժամերգութիւնը կատարում է այնպիսի քահանայ, որի հաւատարիմ զգացումներին կարելի է վստահել, զինուորներին պէտք է ուղարկել խմբովին, ենթասպայի ղեկավարութեան ներքոյ, միևնոյն է, լինի նա ռուս թէ հայ։ Ժամերգութիւնը աւարտելուց յետոյ՝ զօրախումբը ամբողջ կազմով պէտք է վերադառնայ զօրանոց։

„16) Աշխատել սահմանափակել այն հայ զինուորների թիւը, որոնք երկարատև արձակուրդ են ստանում, և

„17) Այն անձանց վերաբերմամբ, որոնք կասկածելի են զօրքի մէջ յեղափոխական պրոպագանդի փորձեր անելու տեսակէտից, տեղեկացնել զօրաբաժնի գլխաւորին։

„Այն դէպքում, երբ ձեռք առնուող բոլոր միջոցները

չեն պակաւ լեակատար և վերջնական աջողութեամբ և այս կամ այն զօրաբաժնում՝ այնուամենայնիւ երևան կըգան հերձուածողներ, զօրաբաժնի հրամանատարը պարտաւոր է անմիջապէս արմատախիլ անել չարիքը՝ ձերբակալելով մեղաւորներին, կամ՝ գործել ուրիշ, նրանից կախուած, միջոցներով։

„Դրա հետ միաժամանակ՝ պարտաւորութիւն է դըրուում տեղեկացնել պատշաճաւոր իշխանութեան և առանձին կարևորութիւն ունեցող դէպքերում, հաղորդել ժանդարմային վարչութեան։

„Շրջանի զօրքի ժամանակաւոր հրամանատարը, յանձնարարելով ինձ՝ ի լրումն իմ շրջաբերական գրութեան դեկտեմբերի 4-ից ներկայ թուականի, № 4384, հաղորդել Ձերդ Գերազանցութեան՝ վերոյիշեալի մասին, յոյս է տածում, որ ամէն մի զօրաբաժնի գլխաւոր, բացի վերև յիշածներից, կը գտնի նաև ուրիշ շատ միջոցներ ու ձևեր, որպէս զի զինուորին իր երդումից և պարտաճանաչութիւնից շեղող պրոպագանդը մուտք չգործի իրեն յանձնուած զօրախմբի մէջ և որ հայ-զինուորները ապագայում էլ մնան նոյն վստահելի և պարտաճանաչ ծառայողները, որպիսին նրանք եղել են մինչև այժմ»։

Իսկականը ստորագրեց՝

Շտաբի գլխաւոր, գեներալ-լեյտենանտ ԲԻԼԵԱՎԻԿԻ

Միշտ է՝

Գլխ. ադիւտանտի պաշտօն. պարուչիկ Վ. ԱԿՏՕՎԻՉ

Հարկաւոր է արդեօք ոևէ մեկնութիւն աւելացնել այդ գաղտնի շրջաբերականին, որը կասկածի, մոլորման, երկիւղի, ինչպէս և գրգռուած երևակայութեան աննման փնջիկ է...

---

14 ապրիլի

Սահմանագլխին նորից իրարանցում կայ։ Սասունից և Մուշի դաշտից եկած լուրերը „իւղ ածեցին կրակի վրայ“ և կառավարութեան „եռանդուն“ պաշտօնեաները մէկի տեղ հարիւր են տեսնում։ Նոր խստութիւններ, նոր պահակախմբեր, նոր շրջաբերականներ։ Տիրող տրամադրութեան իբրև նմուշ կարող է ծառայել հետևեալ „բոլորովին գաղտնի“ դօկումենտը, որը „բոլորովին գաղտնի“ դիւանատներից անցել է գահի՝ նոյնպէս „բոլորովին գաղտնի“ թշնամիների ձեռքը — ո՞վ դոք, ուշարաձի յեղափոխականներ — և հետևաբար դուք կարող էք, անխռով կերպով, առանց յանցանքին մեղսակից լինելու մեղադրանքի, հրամեցնել կովկասեան հասարակութեան՝ ի գիտութիւն։ Այդ թուղթը, որ ամէն բան ասում է, հետևեալն է.

Ն. Գ. Մ. ԿԱՏԱՐԵԼԱԳԻՍ ԳԱՂՏՆԻ

ԴԻՒԱՆ

ԿԱՂՋՎԱՆԻ

ԳԱԼԻԱՌԱՊԵՏԻ Կարսի շրջանի զինուորական

№ 123

27 փետրուարի 1904 Նահանգապետին

Կաղզվան

„Նախիջևանի շրջանապետը, մի հաղորդագրութեամբ, գրուած փետրուարի 20-ից, № 33, յայտնում է ինձ, որ բերանացի, բայց վստահելի տեղեկութիւններից երևում է՝ թէ ներկայ փետրուար ամսի 11-ին, Կարս քաղաքից Զիբնա գիւղն են եկել չորս անծանօթ հայեր, աշխարհիկ շորով, որոնք գաղտնի կերպով հաղորդում էին երիտասարդներին, որ նրանք պատրաստ լինեն, քանի որ նրանց իմաց կը տրուի, թէ երբ և ուր պէտք է համախմբուել։ Այդ անձինք Զիբնա գիւղից գնացել են Նախիջևան գիւղը, այցելելով այդ շրջանի մի քանի հայաբնակ գիւղերը։ Նրանք ի միջի այլոց քարոզում են, որ հասել է ամենայարմար ժամանակը սկսելու յեղափոխական կոմիտէների գործունէութիւնները, քանի որ Ռուսաստանի ուշադրութիւնը դարձած է և, որ գլխաւորն է՝ զօրքը ուղարկուած է դէպի հեռաւոր Արևելք, իսկ Թիւրքիայում սկսուած են լուրջ խառնակութիւններ, և իբրև թէ Անգլիան էլ շտապեցնում է նրանց, հայերին, ձեռնարկել իրենց գործունէութիւնները, սկսելով Ռուսաստանում և ապա սահմանից անցնելով Թիւրքիա։ Համապատասխան տեղեկութիւններին նայելով՝ կոմիտէները իրենց խմբերը կենտրոնացնում են Բագրան և Անի գիւղերում, Կարսի շրջան, ու Կաբուսուկի գիւղում, Էջմիածնի գաւառ։

„Հաղորդելով վերոգրեալի մասին Ձերդ Գերազանցութեան, պատիւ ունեմ յայտնելու, որ դրա հետ միասին ինձ ենթակայ պաշտօնեաներին ուղարկել եմ հարկաւոր կարգադրութիւններ՝ ուժեղացնելու ինձ յանձնուած շրջանի հայ աղգաբնակութեան վրայ եղած հսկողութիւնը և առաջադրել եմ Նախիջևանի շրջանապետին՝ ամենախիստ քննութիւն բանալ՝ իմանալու, թէ ո՞վքեր են փետրուարի 11-ին Զիբնա եկող հայերը։

„Բացի դրանից, իմ կողմից կարգադրութիւն է եղել՝ հիմնելու 7 հոգուց բաղկացած պահակախումբ Բագրան գիւղում և ուժեղացնելու Զիբնա գիւղի պահակախումբը, վերացնելով ժամանակաւորապէս Նախիջևան գիւղի պահակը»։

(Ստորագրութիւն)

Պէտք է կարծել, որ խնդիրը „պահականոցներից“ դէնը կ՝անցնի, որովհետև լուր կայ, որ սահմանի միւս կողմը, Էրզրում, Թիւրքաց զօրագունդը ուժեղացրած է և Կարսի զինուորական իշխանութիւնը՝ տրուած հրամանագրի համաձայն, ինչ որ ծածուկ պատրաստութիւնների վրայ է։— Ի՞նչ է պատրաստւում վարագոյրի յետևը... Դժուար է պատասխանել, որովհետև այս անգամ վարագոյրը խիստ անթափանցելի է։ Ինչ որ պարզ տեսանելի է, այդ այն է, որ վերսկսեց ամենախիստ վերաբերմունք դէպի յաւիտենական դժբախտները — Թիւրքահայ գաղթականները.

„Ո՞բաեղէց որաեղ,—գրում է մի կովկասեցի բարեկամ— նորից դուրս ընկաւ խիստ հալածանք գաղթականների և առհասարակ Թիւրքահայերի դէմ։ Թիֆլիս քաղաքից քշում են նոյնիսկ այնպիսիներին, որոնք տասն տարուց իվեր այստեղ են հաստատուած և կանոնաւոր անցագրեր ունեն։ Ոմանց 3 օր ժամանակ տուեցին ռուսահպատակութիւն ընդունելու, իսկ շատ պրիստաւներ այդ էլ չեն թոյլ տալիս և պահանջում են՝ անմիջապէս հեռանալ քաղաքից։ Դէպքեր եղան, երբ ոստիկանները տներից դուրս թափեցին Թիւրքահայերի շորերը, իրեղէնները և կնքեցին դռները, ասելով „կորէք ուր ուզում էք“։

Իսկ սահմանագլուխը փակ է։

Թիւրքահայերին քշում են, իսկ կովկասահայերին տանում դէպի բանտ կամ դէպի աքսոր։ Ահա թուեր, քաղուած մի մասնաւոր նամակից. „Ախալքալաքի գաւառից աքսորուած են Ռուսաստան 24 հոգի. 40 հոգի էլ բանտումն են։ Ախալցխայից աքսորուած են առ այժմ 18 հոգի. իսկ բանտերում եղածները բազմաթիւ են։ Կարսից աքսորուածների թիւը 71 է։ Համարեա բոլոր գիւղերից բանտարկուածներ կան, մեծ մասամբ երէցփոխներ և տանուտէրներ, 2-3 ամսով. կոմիսիայի արձանագրութիւնները՝ չստորագրելու համար։ Էջմիածնի գաւառում, Համբլինգի դէմ եղած փորձի պատճառով, կալանաւորուած են 52 հոգի։ Բանտերը լցուում են“։

Բանտե՞ր, բանտե՞ր, ե՞րբ պէտք է ձեր դռները փչուին...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՂԱԶԱՐԵԱՆ

(ՀՐԱՅՐ-ԳԺՈԽՔ-ՈՒՐԻԱԿԱՆ)

Նա էլ ընկաւ, սիրահարը հպարտ լեռների, ուր նա ազատութեան կրակն էր բորբոքում, իբրև ռազմիկ ու քարոզիչ, իբրև խմբապետ և գործիչ։ Աշխատեց հաւատով և մեռաւ հպարտօրէն, կուրծքը թշնամուն տուած։ Նրա օրինակը գնահատելի է, կեանքը՝ խրախուսող։ Առաջնակարգ՝ այդ կեանքին, լի հրապուրական գծերով, կը նուիրուեն շատ էջեր „Դրօշակի“ մէջ, գրուած նոյնիսկ նրա ցաւակիցների ձեռքով, որոնք բաժանեցին նրա վիշտն ու պարծանքը, նրա տառապանքներն ու յոյսերը։

Հարազատ ծնունդ վշտավայրի (Մշոյ դաշտի՝ էր նա), ապրած այն մթնոլորտում, որ ստեղծեց հայկական շարժումը, նա եղաւ ոչ միայն յեղափոխական ղեկավար, այլ ամենալաւ հոգեբանը հայ ժողովրդի։ Սասունցական հոգեբանութեան վարպետ էր հրայրը։ Եւ կասկածում ամբոխի խաւերի մէջ ոչ ոքի չէր աջողւում ձեռք բերել այն լայն հեղինակութիւնն ու անպայման հաւատը, ինչ որ վայելում էր Սասունի աշխատաւորը։ Այդ կողմից նա մի կախարդ էր, որ անհաւատալի հեղութեամբ կարողանում էր մղել մարդկանց, նոյնիսկ թերահաւատներին, դէպի ամենադժուարին գործեր, դէպի անձնազոհութիւն։

Աչքերը յառած հայկական ազատագրութեան նպատակակէտին, որին նա մնաց միշտ հաւատարիմ, եռեռած գործի մէջ և ղեկավարուած միմիայն մի քաղաքականութեամբ՝ յեղափոխական գործի քաղաքականութեամբ, նա պատրաստ էր ձեռք մեկնել ամենքին, որոնք նրա օգնութեանն էին դիմում, և աջակցութիւն ընդունել բոլորից՝ ուր դա նպատակայարմար էր, առանց կուսակցական խարութեան։ Դա նրա մտածողութեան բնորոշ գծերից մէկն էր։

Ապաբաղդ կուռը։ Նա էլ, ինչպէս և նոյն գործի ուրիշ մշակները, չըտեսաւ այն Մեծ Ընշաւլոյսը, որին վշտոտ սրտով և հնկայական համբերութեամբ սպասում են սերունդներ սերունդների յետևից, լեռների կատարներին և բանտերի մութ խորշերում։ Դա զգաց, որ կոիւը ճակատագրական է, և վախճանը՝ մօտ։ Զգաց, բայց յետ չնահանջեց։ Ահա թէ ինչ էր գուշակում Սէմալի անփոխարինելի հերոսը մի նամակում, որ նրա վերջին „մնաս բարովն“ պէտք է համարել.

Սասուն, 27 փետրուար

„Ընկերնե՛ր,

. . . . . .

„Օրէցօր ժողովրդի դրութիւնը կը վատթարանայ. կասրածի ձեռնարկներ կը ծրագրւին և փորձեր կը կատարւին։ Ալայի պէյը Բաղէշէն „ճան-պէզար“ կոչուած հեծեալներով հնաւ Մուշ և տեղւորուեցաւ հայոց թաղերը։ Տիզասրենց Մէհմէտ էֆ. անուն հարիւրապետը՝ 15-20 ոստիկաններով քիւրդ յեղապետներու հետ խորհրդակցութեան պաշտօնով՝ կը շրջի Դաշտի մէջ։ Ընշուշտ թրքական դժոխք մը չինելու ծրագրեր կը կազմի նոյն այս ձմեռուայ միջոցին։

„Մշոյ և Դաշտի յարաբերութիւնները խլած են. շուկան հինգ օրէ իվեր հայերից ամայի է, առեւտրը ամբողջապէս դադրած է. գեղէ գեղ երթևեկութիւնը արգիլած է։ Մեծ պահքի առաջին օրը Պատոյ Տարրը գիւղի քրդերը՝ միացած Մշոյ թիւրը տարրի հետ՝ յարձակեցան շուկայի մէջ հարիւրս վրայ. նպատակը լոկ կասրածի ոկզբնապատճառ դառնալն էր։ Քանի գլուխ ուրեմ ջարդեցին։ Խնճաքը կլինի։ Հայ ազգաբնակութիւնը այդ օրից փակուած կը մնայ թաղերու մէջ. վախճանը ո՞ր է, չի գիտցւիր։

„Կարի՞ որ թիւրքերը հեռագրատանէն երբէք չեն հեռանար. անշուշտ կարծիքների փոխանակութիւններ կը կատարւին, դիւական ծրագիրներ կը կազմւին. . .

„Եւ այսուհետև արեան ձայնը պիտի հասնի ձեր ականջին մեր նամակներու և տեղեկագրերու փոխարէն...

„. . . . . Կրշտապեմ և չեմ կրնար երկարել։

„Համբոյրներ և յարգանքներ“։ ՀՐԱՅՐ

Եւ արեան ձայնը եկաւ, աւաղ, նրա նահատակման բոթաբեր ձայնի հետ. . .

Ամրանիկ

ՎԱՍԱԳԷՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

(1897 թիւին ՀԱՅԱՊՈՒՐԱԿԱՆ ԱՆՑՆԵԼԻՍ)

Խմբի անդամներից շատերը արդէն կոչուած են, Ամրանիկը (տես նկարը), որ այժմ կուսակցութեան է Սասունում, 1897-ին այդ խմբի մէջ պարզ զինուոր էր։



ԽԱՉԻԿ ԳՆՈՒՆԻ

(ՇԱՀԷՆ)

1865 — 1896

„Դրօշակի“ 1897 թ. N 11-ի մէջ տպուած են Սասնոյ հերոսի կեանքի մանրամասնները։ Հիմա կարը այժմ միայն աջողուեց ծեռք բերել։ Բերում ենք նրա վերջին նամակը, գրած նահատակման նախորդ օրը, իր մի մտերմին.

Սիրելիդ իմ,

Վաղը հարսանիքիս օրն է . . . Ազատութեան ոգին թեւերը բաց՝ անհամբեր ինձի կը սպասէ։ Ներէ՝ որ առանց քեզի կանխաւ լուր տալու, վերջնական ոգեշունչ տուի . . .

Կնքօտագին հանդիպումներիս՝

ՇԱՀԷՆ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունը՝ հայկական մի հիմնարկության կողմից Սասունի դէպքերի առիթով իրեն ուղղած հեռագրին՝ պատասխանել է հետևեալ գրությամբ.

FOREIGN OFFICE

May 30th. 1904

Sir:

I am directed by the Marquess of Lansdown to acknowledge receipt of your telegram of the 21st. instant. In reply to your request for the intervention of His Majesty's Government in Armenia I am to say that His Majesty's Ambassador at Constantinople and His Majesty's Consuls in Armenia are doing all they can to prevent excesses on the part of the Turkish troops.

I am, Sir, Your most obedient,

humble Servant,

T. B. Sanderson

(Թարգմանություն)

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

ԼՈՆԴՈՆ, 30 մայիս 1904

Պարոն,

Ինձ հրահանգված է մարկիզ Լանդաուսնի կողմից՝ տեղեկացնել ձեզ 21 ղրկած ձեր հեռագրի ստացման մասին։ Ի պատասխան ձեր դիմումին՝ նորին Մեծության կառավարության միջամտության վերաբերմամբ Հայաստանում՝ ես հրահանգ ունեմ ասելու, որ նորին Մեծության դեսպանը Կ.Պոլսում և նորին Մեծության հիւպատոսները Հայաստանի մէջ անում են բոլորը, ինչ որ կարող են՝ թիւրք զօրքերի կողմից լինելիք ծայրահեղությունների առաջն առնելու համար։

Մնում եմ, պարոն, ձեր ամենահնազանդ,

խոնարհ ծառայ

Տ. Բ. ՍԱՆԴԵՐՍՈՆ

*

Ֆրանսիական Նիմ քաղաքում, ապրիլի 7-10-ին կայացած „Ֆրանսիական խաղաղության ընկերությունների“ երկրորդ կոնգրէսը հայկական և մակեդոնական հարցերի վերաբերմամբ ընդունեց հետևեալ որոշումը.

„Պ. Միլհօ-ի առաջարկությամբ, Համաժողովը՝ միանալով Միջազգային խաղաղության կոնգրէսների զանազան որոշումներին, վճռում է պահանջել յօգուտ Հայաստանի և Մակեդոնիայի ազգաբնակության Բերլինի դաշնագրի 61 և 23 յօդուածներով խոստացած արտօնությունները“։

*

Մայիսի սկզբներին Գահիրէ քաղաքում տեղի ունեցաւ մի մեծ միտինգ օտարազգիների մասնակցությամբ՝ յօգուտ հայկական դատի։ Միտինգը իր ընդունած որոշումը հաղորդեց անգլիական, ֆրանսիական, իտալական և ամերիկեան կառավարություններին։

*

Մայիսի 7-ին Բոստոնում կայացաւ նոյնպէս մի միտինգ հայկական խնդրի առիթով։ Ֆրանսիական յայտնի հրապարակախօս և հայասէր Ա. Լերուա-Բոլիէ, որ հրաւիրված էր Ամերիկա համալսարանում մի քանի դասախօսությունների համար, մասնակցեց այդ ժողովին և արտասանեց մի վերին աստիճանի համակրական ճառ։ Ժողովը դրված էր „Հայաստանի Բարեկամներ“ կոչուող և բուն ամերիկացիներից կազմված ընկերության հովանաւորության տակ։

*

Ստացանք հետևեալ տեղեկությունը.

„Աղեքսանդրիայում Յունանի դէպքի առիթով կայացած հայկական միտինգի նախագահ Բարդուղիմէոս վարդապետը ստացել է անգլիական կառավարության կողմից նպաստաւոր պատասխան միտինգի հեռագրին“։

*

Ապրիլի 16-ին գրած մի նամակով հետևեալ տեղեկությունները են հաղորդում մեզ Կարս քաղաքից.

„Կովկասեան աւազականոցներից մէկի վարագույրը պատուհց։ Կարսի ոստիկանությունը խիստ իրարանցման մէջ է. ոստիկանապետ Խերխէուլիձէ ինքնասպանությամբ վերջ տուեց իր ցոփ ու անարգ կեանքին, կամենալով այդ կերպ ազատել այն յանցանքներից, որ կատարել է իր հինգամեայ ծառայության միջոցին։ Վռնդված մի ծառայողի — ազգով յոյն — բողոքների հիման վրայ, խիստ քննություն է բացված ոստիկանության մէջ։ Ինչե՞ր ասէք, որ չեն կատարել այնտեղ։ Ոճիրներ և զեղծումները այնքան շատ են, որ նահանգապետի նոր օգնականը չվարանեց ուղղակի յայտարարել, թէ սա „պոլիցիա չէ, այլ աւազակների խումբ“։ Եւ այդ աւազակային խումբը այսքան տարիներէ իվեր իր ձեռքն է առել մեր վարչական գործերի ղեկը։

„Կովկասի մէջ եկեղեցական գործերի պատճառով ամէնից շատ տուժողը Կարսն է եղել։ Նորհիւ այդ անարգ ոստիկանապետի և դրա հետ միասին անընդունակ նահանգապետի, որ խաղալիք էր դարձել առաջինի ձեռքում։ Լուրեր կան նոյնիսկ, որ գողության արդիւնքը բաժանուում էր բոլորի մէջ... Էլ կոշկակար, էլ վաճառական, էլ դերձակ չմնաց, որ անմեղ տեղը 2-3 տարով բանտարկությունն կամ 4-5 տարով աքսորի չժամանեն՝ և բոլորն էլ ոստիկանապետի անձնական հաշիւների պատճառով։ Եթէ մի կոշկակար երբևիցէ համարձակուել է ոստիկանապետի կնոջ կամ աղջկան ապառիկ կոշիկ չտալ կամ մի վաճառական՝ ապրանք, նա ներկայացված է իբրև յեղափոխական և աքսորված։ Եօթանասունից աւելի անմեղ ընտանիքներ թշուառացան նրա պատճառով։

„Բայց արդեօք նորը հնից լաւ պիտի լինի“...

*

Մերսինից հաղորդում են.

„Ապրիլի 17-ին, կիրակի օր, առաւօտեան ժամը 1-ին (ըստ թրքաց), Մերսինի բանտին մէջ թիւրք բանտարկեալները զինված կը յարձակին հայ բանտարկեալներու վրայ, անոնցմէ երկուքը կըսպանեն և երեքը կը վիրաւորեն։ Սպանուածներն են՝ հաճընցի Բարսեղը և տարսօնցի Կարապետը։ Կ. Պոլսէն պահականաւ մը եկաւ Մերսինի առաջ. տեղական կառավարությունը գրեթէ անտարբեր կը կենայ։ Մարդասպան բանտարկեալները Ատանա տարուած են. Մերսինի ժողովուրդը յուզված է“։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Հ. Յ. Դ.

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովը, նկատելով անցեալ բանակցութիւններու անյաջող փորձերը, այն դատապարտելի ոգին, որ արմատացած է հնչակեան երկու հատուածներու մէջ թէ յեղափոխական ընդհանուր տեսակէտով և թէ մասնաւորապէս „Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ նկատմամբ, և այն ներքին պայքարները, որոնք ի վերջոյ եղբայրասպանութիւններու յանգեցան, արատաւորելով հայ յեղափոխութեան և հայ ժողովուրդի պատիւը, մերժեց ոեւէ քայլ ընել միութիւն կամ համերաշխութիւն կընքելու համար անոնց հետ։

Այս որոշումը սակայն չ՚արգիլեր, մանաւանդ երկրի մէջ, դաշնակցական ընկերներուն՝ վերոյիշեալ և այլ մարմիններուն պատկանող, գործին նուիրուած և վստահելի անհատներու և խմբերու հետ համերաշխօրէն կռիւ մղել ընդհանուր թշնամիին դէմ։

(Քաղուածք Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնից)

„Հայ Յեղափոխական Դաշնակցութեան“ Ընդհանուր Ժողովը, նկատի առնելով ընկեր Զալլադի անկեղծ զղջումը և վերջերս նորէն վտանգաւոր գործերու մէջ նետուիլը՝ որոշեց յիշեալի մասին „Դրօշակի“ 1898 յունուարի թիւին մէջ տպուած յայտարարութիւնը, որով Զալլադը հեռացրուած էր Զրաբերդի շրջանի դաշնակցական գործերէն՝ իբրև անկարգապահ ընկեր, չեղեալ համարելով, գործի վերաքննութիւնը յանձնել Ոսկանապատի կոմիտէին, եթէ այդ առթիւ Զրաբերդի կոմիտէին կողմէ հարց բարձրացուի։

(Քաղուածք Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնից)

ՏԷՌՕՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Կենտրոնական Կոմիտէիս վճռով տէռօրի ենթարկուեց շորագեալցի Կիրակոս անունով մատնիչը։ Տէռօրիստները ազատ են։

Տէռօրի է ենթարկուած նաև Հ. Յ. Դաշնակցութեան նախկին զինուոր Կոստին՝ իր ընկերոջ հետ, ենիչերիութեան և յեղափոխական անունը շահագործելու պատճառով։ Յայտարարուում է այդ փաստը, թէև քիչ ուշ, ի գիտութիւն և ի զգուշութիւն միւս հայդուկների։

ԶՐԱԲԵՐԴԻ ԿԵՆՏ. ԿՕՄԻՏԷ

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Ռուսաստան. — Ոսկանապ. „Դրամ“ կոմիտէից 10000 ֆր., Պ. ք-ի հայ ուսանողներից 6090 ֆր. 75 սանտիմ՝ ի նպաստ երկրի կուսակցների։

Բուխարա. — Առաջին Էմիրական խմբից Բէկ.-ի միջոցով՝ 265 ֆրանք։

Ամերիկա. — Փիլադէլֆիայի կոմ.-ից 50 դոլար (257 ֆր.), Փիչբուրգի կոմ-ից 51 ֆրանք։

Ռումանիա. — Գալացի Ծերունի խմբից 163 ֆր., Պապատաղ ք-ից 106 ֆր. ի նպաստ երկրի կուսակցների. նուիրատուներն են՝ Մինգեմ, Հ. Հ., Օ. Թ., Ա. Բ., Ս. Ը., Պ. Մ., Գ. Ռ. 10-ական, Փ. Բ., Գ. Կ., Գ. Ա., Պ. Մ., Ղ. Զ., Թ. Մ. 5-ական, Կ. Ե. 4, Մ. Բ. 2 ֆր., Գալացից Կար. Պող. 64 ֆրանք։

Փրանսիա. — Պարիզից Ն. Ցարութ.-ի միջոցով 20 ֆրանք, նուիրատուներն են՝ Larraritzky. Pritman. Carles, Oungare, Mendelef. Roundakof, Ղումբրեանց, Ոսկանեան։ Մոնպելիէից Շար.-ից 23 ֆրանք 50 սանտիմ։

Գերմանիա. — Դիւսելդորֆից ճան 5 ֆրանք, Լայպցիգից Շիր-ից 12 ֆրանք 20 սանտիմ։

Շվէյցարիա. — Բերնի հայ ուսանողներից, ի նպաստ երկրի կուսակցների՝ 14 ֆրանք։

Յունաստան. — Զաքինթոյից Գ. Մ. 5 դրախմ, Պիրէից Վտարանդի 7 ֆրանք։

Պարսկաստան. — Ռաշտից Ս. Գ.-ի միջոցով 250 ֆրանք։

Հարէշստան. — Ջիբութիից Կ. Կ.-ի միջոցով 380 ֆրանք, հանգանակուած Հարաբի հայերի մէջ։ Նոյն տեղից Սր.-ի միջոցով 1200 ֆրանք, ի նպաստ հայրենիքում կուսակցների. նուիրատուներն են՝ Մ. Գ. 1000 ֆր., Կ. Կ. 25, Գ. Ա. 150, Գ. Ս. Ա. 15, Ա. Փ. 10։

Ընդհանուր զումար 18,908 ֆրանք, 45 սանտիմ, 5 դրախմ։

ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ կեդր. կոմիտէն՝

Արշակաւան քղ.-ից № 15520՝ 3500 ռուբլի, № 15521՝ 1250 ռ., № 15522՝ 200 ռ., № 15477՝ 1000 ռ., № 15478՝ 200 ռ., № 15524՝ 250 ռ., Փ.-եան 1000 ռ., Ա.-եան 300 ռուբլի։

Նաւահանգստից՝ Խիկար խմբ. 57 ռուբլի, Զարեվանդ խ. 22. 70, Հայկազեան խ. 39. 80, Արծրունի խ. 51. 61, Սամուէլ խ. 15. 10, Ղարատուման խ. 86. 42, երեկոյթից 150, Դերիկ խ. 23. 40, Մուշեղ խ. 20, Մաքսուտ Թ.-եանից 5, Բիւրակն խ. 20, Վարազդատ խ. 50, Սուրէնեան խ. 19. 60, Շանթ Շահումից 12. 55, Կայծակ խ. 63. 20, Արմատ խ. III. 20. 90, Շանթ խ. 35. 5, Արշալոյս խ. 4, Բազրատունեաց խ. 41. 50, Արշաւիր խ. 120. 90, Սր. Ցակոբ խ. 35. 50, Մ. Ք.-եան 30, Կլոր քղ.-ից 32 ռ.։

Զորափորից՝ Սպարապետի հանգանակութիւնից 465 ռուբլի, Վազգէն խ. 7, Արշակունի խ. 8. 40, Ներկայացումից 24. 15, Արշակունի խ. 15, Մարզ խ. 7. 60, Վազգէն խ. 10. 65, Վրէժ մասնաճիւղէն 17. 85։ Գաղթավայրից՝ Սերոբ խ. 102, նուէրներ 37։ Ամառանոցից՝ Սրպուհի խ. 60, Պանդուխտ հայրենասէր խ. 70 ռուբլի։

Օ. քաղաքից՝ Խնդրակատար խ. 40 ռուբլի, Անիւծ խ. 10, Գիսակ խ. 10, Մօտկան խ. 10, Նոր խ. 15, Կայծակ խ. 10, Դժիկ խ. 10, Եփրատ խ. 10, Մազեօրք 15, Խնդրակատար խմբից հանգանակուած՝ Սարիգաւակ 6 ռ., Պրակ, Հարմին, Մազաջուր, Ամբաւ 10-ական, Կանաչ, Բանէն, Զուկօ, Գլխած, Շկակ, Խաչարան, Հարկաւ, Կայծակ, Բոլորիկ, Փափաք կատար, Կտրան, Սեպուլեան, Գնդակ, Բուղդարտ, Ռումբ, Զէակնակ, Նաւասարդ, Վրէժ, Փորատար 5-ական, Ասլան, Յորեն, Մալատօ 4-ական, Շհան, Եղիա, Արծիւ, Խաս, Ջալալ, Ճէմս, Մօզիկ, Պամ, Հայելի, Ն. Ս., Թամօ, Բաղշօ, Պարոյր, Անթառամ 3-ական, Պուլախիկ, Ղարապոչ, Կեանք, Մօուէ, Լեփրատ, Արտաշէս, Դաւօ 2-ական, Աստիտակ, Ծերունի, Սաքան, Խաչպան, Զանջալ, Փիլօ, Աշոտ 1-ական, Նոր խմբից հանգանակուած՝ Ծաղիկ 3 ռ., Փայտ, Սարիկ, Նշնիկ, Պայծառ, Արծիւ, Կարմիր, Պապիկ 2-ական, Սէվօ, Կազաւ, Թարշի, Կորեկ, Սիւտակ 1-ական, Գէլիէզուզան 3, Լայլան 5, Գիսակ խմբից հանգանակուած՝ Աշոտ Երկաթ, Ասլան, Վրէժ, Կայծակ 2. 50-ական ռ., Նոանդ 2, Անիւծ 1, Փուշ 2, Ցուլ 1, Միհրան 2, Մօտկան խմբից հանգանակուած՝ Խալասար 5 ռ., Սաթասէր 5, Առաջեան, Կայծակ, Սազօ, Վարդ, Պօչար 2-ական, Սիսակ, Կարօ 1-ական, Մայօր խմբից հանգանակուած՝ Լոր, Տունտուլան, Ջանջան 2-ական, Պալթա, Վարլամա, Կլոր 3-ական, Որսորդ 1, Դանակ 5։ Համակրողներից՝ Կորմնք, Սոխակ, Ծառ, Նշոյլ, Աստիտակ 2-ական ռ., Ծառկանք 5, Զաման 1, Տաւա 5, Պար 8, Կէտ 3, Սլաք 3. 50, Վրէժ 1, Նշոյլ Ընկեր 2. 60, Սուրէն 9, Շաբար 3, Փու՛ 1. 50, Կոռնկ 3, Կանտիտօր 5, Ս. Ց-ից 15, Ասլան 10, Կանֆէթ 50 կոպէկ։

Խարիսխ եւ Նաւակ խմբերից „աւետիսի“ նուէր՝ Մահակ 5 ռուբլի, Վառարան, Բօմկա, Ոմն, Լուսնիակ, 1. 50-ական, Ինքնաեռ 5, Բաժակ, Արծիւ, Քնար, Մանուֆակտուր, Ծաղկազարդ, Թորոս, Առանձնուհի, Մարս 2-ական, Անտառ, Նոշիւր Դարբին, Վագր, Կառք, Հացակեր, Նժոյգ, Ճարտար, Միութիւն, Ճաշեցի, Վարդ, Ժամացոյց, Սղոց, Ցոլակ, Ն. Ն., Շիշ, Մէլիք, Ծաղիկ, Աղբիւր, Գիւմուշ, Սուրհանդակ, Անիւծ, Այծեմիկ, Գարեջուր, Դարման, Աստղիկ, Ոմն, Դոխիկ, Կայարան, Կայծ 1-ական, Ոմն, Գլխարկ, Արմէն 3-ական ռուբլի, Կօշկակար, Ղաքիք 50-ական կոպէկ։ Ընդամէնը 72 ռուբլի։

ՌՈՒՄԱՆԻԱ՝

Քոնստանցայի կոմիտէն ստացեր է նոր տարւոյ առթիւ.— Ղեւոնդեան խմբէն 121 ֆրանք, Սերոբ խմբ. 112, Զորս-Գանձ

խմբ. 99. 50, Կարմիր Խաչ 85, Պաշիպօզուք 69, Աղուարդ խմբ. 72, Ծաղիկ 55, Բարեկենդանի առթիւ մասնաւոր հանգանակութենէ մը 86. 50, Տ. Թ. 50, Դ. Դուլմճ. 20, Առիւծ 20, Տ. Լ. 20, Ն. Աղպ. 20, Մ. Ս. Ք. 16, Աւետիս 15, Կիւլէսէր 5, Ե. Կ. 12, Մին. Դ. 10, Ս. Օ. Խ. 8, Կտ. Օ. Խ., Թոմիզ, Ե. Դ., Ե. Թ., Ե. Խոնարար 5-ական, Թորոս Օ. 8, Մօլտավան 2 ֆր.: Ընդամէնը 931 ֆրանք:

ԲԱԼԿԱՆԵԱՆ կեդր. կոմիտէն՝

Շումլայի ենթակոմիտէն ստացեր է հետեւեալ հանգանակութենէն զոյացած գումարի կէսը.—

Թ. Հաճի Ստ. 50 ֆրանք, Ոմն 30, Մկ. Գավ. 20, Ոմն 10, Ցով. Ք. 40, Ք. Սէ. 5, եղբ. Պոյ. 40, Կ. Ամ. 20, Պ. Ե. 30, Ցար. Պետ. 15, Հ. Ցակ. Պեն. 5, Ալ. Խաչ. 5, Դ. Թ. 10, Վռ. Մ. 10, Մ. Թ. 5, Գ. եւ Դ. Աւ. 20, Գր. Թ. 10, Հաճի Ցովս. եղբ. 8, Աբ. Հալ. 20, Թ. Քարամ. 20, Ե. Թ. 5, Նիկ. Վ. 20, Գ. Քէթ. 2, Համբ. Պ. եւ որդի 15, Օն. Աղ. 15, Ստ. Հ. 10, Ռ. Հմ. Հ. 10, Արտ. Կար. 10, Սող. Պ. 5, Արտ. Ասլ. 5, Մ. Ե. 5, Դաւ. Խ. 10, Ա. Մարտ. 7, Հ. Գ. 2, Մ. Ղազ. 3, Կ. Պոզ. 1, Խաչ. Թ. 1, Ասլ. Տօն. 4, Դուրս. 2, Փէշտ. 5, եղբ. Շ. եւ Ե. Մար., Ն. Հալ. 5-ական, եղբ. Գ. Մկ. 5, Կ. Շահ. 1, Ե. Հ. Մազ. 1, Կար. Գ. Մ. 2, Հմ. Սեղ. Հ. 2, Դր. Պ. 10, Մկ. Մ. 2, Մկ. Ք. եւ եղբ. 2, Ե. Մար. 3, Մանկ. 3, Գ. Պետ. 2, Տիգ. Ս. 3, Տիգ. Ե. 2, Տիգ. Հ. 2, Ա. Շալ. 2, եղբ. Զար. 20. 15, Կ. Սահ. 1, Փար. Ա. 2, Տ. Ոզմ. 1, Մ. Գր. 2, Դ. Աւ. 5, Մ. Գէորգ. 1, Սար. Ե. Օ. 50, Նազ. Կ. 1, Ներ. Ք. 1, Թ. Ման. Օ. 50, Մ. Մար. 5, Գ. Մուր. 5, Խ. Ս. Հմ. Գր. 5, Մ. Ս. Պոյ. 2. 50, Ցակ. Ա. 5, Տիգ. Մ. 2, Մ. Զար. 2, Միս. Ե. 1, Սաֆ. Մ. 1, Ե. Ցար. 1, Ղազ. Ե. 1, Ստ. Հմ. Ե. 1, Խ. Միս. 1, Ֆիլիպ սրճ. հայաստանցիներէ 5: Գումար 634 ֆր. 65 սանտիմ:

Վանայի կոմիտէի զանձած.—

Գալուստի ծեռքով Հ. 2 ֆրանք, Երեք ընկերներ 10, Կ. Թ. 4, Պ. Գ. 4, Ա. Գ. 4, Թադէոս 10, Սպաթար խմբ. մէկ ամսավճարը 6 ֆրանք:

Հարօն խմբէն. (յունուար) 11 ֆր., Նոյն խմբ. (փետրուար) 11, Հայրիկ խմբ. (յունուար) 11. 50, Նոյն խմբ. (փետրուար) 10. 50, Ռշտունեաց խմբ. (մարտ) 9, Ա. Զիլէբեանի ծեռքով հանգանակ. 9. 10, Հ. Կիւմիւզեանի ըրած վիճակահանութ. արդիւնք 14. 40, Զատկի առթիւ նէր Ե. Տ. Ցակոբեան 10 ֆր.: Ընդամէնը 126 ֆրանք 50 սանտիմ:

Նախորդ շրջանի մէջ Վարդօյի միջոցով ըրած հանգանակութենէն ստացեր է Ռուսչուքէն եւ Շումլայէն.—

Ոսկերիչ 100 լէվ, Ոմն Ս. 10, Պ. Փ. 5, Արծնեցի 40, Քարոզող 5, № 208՝ 10, Ք. 10, Քաջունի 10, Ոմն 10, Արծիւ 10, Ա. Փ. 8, Վ. 5, Հ. Ք. 10, Ե. Ա. 3, եղբարք Փ. 30, Ծ. Խ. 10, № Ա 50, Արամեան 10, Մատող 10, Թագուի տղիկ 15, Հ. 10, Ե. 5, Վարդ. Ն 15, Ե. Մ. Խամ. 5, № 17՝ 50, Ոմն 10, Փ. Գ. 10, Սեն 30, եղբ. Վարդ. 20, Ծեփարար 50, Կեղեւ 5, Տէրօն խմբ. 35, Լազ 5, Թաթուլ 30, Ե. Սայեան 20 լէվ: Ընդամէնը 634 լէվ:

ՈՍԿԵՀԱՆՔԻ կեդր. կոմիտէն՝

1903 թւի 14 մայիսէն Ճ31 դեկտ. 1903 թւի.—

Վահազն 33 դուրուշ (փուտ դրամ), Որոտ խումբ 75, Խիզախ 42. 75, Միր Կարօի ծեռամբ Պղտօէն 99, Սեպուհ երկու անգամէն 99, Ճակատ երեք անգամէն 24. 50, Անծանօթ 66, Կ. Խ. 14, Խիզախ 41. 50, Նոր-գիւղէն 198, Սարհատ խումբ 80, Արիւն խումբ 123. 50, Արսէն 82. 50, Սեպուհ 99, Ղազար խումբ № 2939՝ 99, Համակիր № 2940՝ 534, Համակիր օրիորդ № 2941՝ 356, Արմաւիր 36, Կայծակ երկու անգամէն 30. 50 դրշ. փուտ:

№			№			№		
2950	356	դրշ.	2944	356	դրշ.	2931	468	դրշ.
2932	312	դրշ.	2933	712	դրշ.	2934	312	դրշ.
2935	156	„	2948	712	„	2946	356	„
2936	312	„	2937	267	„	2942	1068	„
2947	1068	„	2945	356	„	2938	356	„
2949	156	„	2959	99	„	2960	156	„
2943	1068	դուրուշ փուտ:						

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՅԻ ՓՕՍՏԱՐԿՂԸ

ՌՈՒՄԱՆԻԱ՝ — ՄԻՆԱՍ ՊՕՂՈՍԵԱՆ. Ձեր նամակին չենք կարող պատասխանել քաղաքի անունը անընթեռնելի լինելու պատճառով:

Մ. Ք. — ԸՆԿԵՐՆԵՐԻՆ. Ձեր գլխաւոր պայմանը կատարւում է աշխոյժութեամբ: Սպասում ենք նամակների: Սիսեցուն շտապեցրէք:

ՈՍԿԱՆԱՊԱՏ՝ — Կ. ԿՕՄԻՏԷԻՆ. Ուղարկւում՝ են ձեզ կտրոններ: Ձեր բոլոր ծրարները ստանում՝ ենք կանոնաւոր կերպով: Շարունակեցէք անընդհատ:

ՋՐԱԲԵՐԴ՝ — ՀԱՅԿՈՒՆՈՒՆ. Վրէժեանի միջոցով մէկ ու կէս ամիս առաջ ուղարկւած են ձեր ուղած գրքերն ու թերթերը: Տեղեկութիւնները փութացրէք:

ՄՐԳԱՍՏԱՆ՝ — Կ. ԿՕՄԻՏԷԻՆ. Ձեր ուղած հրատարակութիւնները ուղարկւած են:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ
„ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՂԱՓԱՐԸ“
ԳԻՆԸ 1 ֆրանկ
Դիմել՝ Rédaction du „Droschak“, Genève (Suisse)

„ԴՐՕՇԱԿԻ“ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

„Դրօշակի“ վերաբերմամբ ընդհանուր ժողովը կարգադրեց՝

1) „Դրօշակը“ ձրի տարածել միմիայն Թիւրքաց Հայաստանում և Թիւրքիայում:

2) Այդ սահմաններից դուրս՝ վերացնել մինչև այժմ գոյութիւն ունեցող անվճար ձևերև նշանակել բաժանորդագրութիւն հետևեալ կերպով՝ Ռուսաստան և Կովկաս՝ 2 ռուբլի. Պարսկաստան՝ 1 թուման. Ամերիկա՝ կէս դոլար. Եւրոպա և մնացած երկրներում՝ 3 ֆրանք տարեկան:

3) Այն տեղերում, ուր գոյութիւն ունեն „Դաշնակցութեան“ կոմիտէներ, „Դրօշակը“ տարածւում է վերջինների միջոցով, որոնք և պարտաւոր են գանձել տարեկան վճարը և ամբողջութեամբ, համաձայն տարածուող համարների քանակի, հասցնել Արևմտեան Բիւրոյին:

4) Կոմիտէ չեղած տեղերում մասնաւոր անձինք, „Դրօշակը“ ստանալու համար՝ պէտք է դիմեն խմբագրութեան՝ կանխիկ ուղարկելով տարեկան վճարը:

„Դրօշակի“ վերաբերեալ այս որոշումները գործադրութեան մէջ են մտել ապրիլի համարից սկսած: